AZG NEW PDF.qxd 23/03/2010 23:15 Page 1

Ազգ
Azg
24 ՄԱՐՏ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 51 (4432)
ISSN: 1829-1651

# Էրդողանը զանգահարել է Պուտինին

Այս մասին տեղեկացնում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը՝ մեջբերելով Ռուսաստանի վարչապետի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի խոսքերը. «Մարտի 23-ին թուրքական կողմի նախաձեռնությամբ Ռուսաստանի եւ Թուրքիայի վարչապետներ Վլադիմիր Պուտինի եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջեւ տեղի է ունեցել հեռախոսազրույց, քննարկվել է երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների ներկա մակարդակը, ինչպես նաեւ միջազգային խոշոր նախագծերի իրականացումը, այդ թվում՝ էներգետիկ ոլորտին առնչվող նախագծերի: Երկու վարչապետները քննարկել են նաեւ միջազգային տարբեր կազմակերպություններում փոխգործակցության մի շարք հարցեր», նշել է Պեսկովը:

Հ. Ա.

# Պոլսահայությունը վարժված է Էրդողանի հայտարարություններին

## Իսկ որ Թուրքիայում 100 հազարից ավելի հայաստանցի չի էլ կարող լինել, անվիճելի փաստ է բոլորի համար

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությունը երկրում անօրինական գտնվող հայաստանցիներին վտարելու մասին, այն էլ 100 հազարանոց կազմով, բազմաթիվ արձագանքների ու տարբեր գնահատականների արժանացավ, յուրաքանչյուր քննադատության պարագայում տարբեր պատճառներով:

Անկախ ամեն ինչից, այն, ինչ դրսից մեկ բան է թվում, ներսից կարող է լիովին այլ թվալ, ու թերեւս պատահական չէ, որ, թեկուզ հենց հայ համայնքի կտրվածքով, էրդողանի հանդեպ վերաբերմունքը Թուրքիայի ներսում մեծապես տարբերվում է Թուրքիայի վարչապետի հայտարարությունների նկատմամբ դրսի արձագանքներին:

Պոլսահայ համայնքի համար վարչապետ Էրդողանի հայտարարությունը լուրջ սպառնալիք չընդունվեց երկրում գտնվող հայաստանցիների հասցեին: Այսպես է իրավիճակը գնահատում «Մարմարա» թերթի խմբագրապետ **Ռոբեր Հադդեճյանը**:



Ռոբեր Հադդեճյան



Սարգիս Սերոբյան

«**Ազգի**» հետ զրույցում պրն Հադդեճյանը նշեց, որ Թուրքիայում լավ գիտեն վարչապետի տրամադրությունները, ու հայաստանցիներին վտարելու մասին հայտարարությունից չեն վախեցել, թե իրականություն կդառնա: «Վարչապետի խոսքը պոլսահայ համայնքին չէր վերաբերում, այլ դիմացինին մի քիչ մտածել տալու համար էր ասված», Էրդողանի հայտարարությունն այսպես է մեկնաբանում «Մարմարա»-ի խմբագիրը:

Հադդեճյանի պատկերացմամբ, թեեւ Թուրքիայում դեռ շարունակվում է քննադատությունը, այդուհանդերձ, հարցն արդեն փակված է:

Տես էջ 2

# Հայ-թուրքական պատմական հանձնաժողովը՝ ստեղծման գործընթացո՞ւմ

Միացյալ Նահանգները մեկ անգամ չէ, որ ապացուցել է սեփական մոտեցումների երկակիությունը, ընդհանրականության բացակայությունը: Այն ժամանակ, երբ նահանգների նշանակալի մասն ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը, ԱՄՆ գործադիր իշխանությունները համառում են անգամ ցեղասպանություն եզրն օգտագործելու հարցում, կարծես ԱՄՆ դաշնային կառույցները հեռու են նահանգները ներկայացնելուց:

Ինչեւէ, այն, ինչ ռուսաստանյան առաջին ալիքի ուղիղ եթերում Վլադիմիր Պոզների կողմից տարբեր մարդկանց հարցերի մասուցմանն ի պատասխան մարտի 22-ին ներկայացնում էր ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, տեղավորվում էր ամերիկյան քաղաքականության հակասությունների ու անհամաձայնությունների, երկակիության ու բազմաստանդարտության դրսեւորումների ընդհանուր իրավիճակի մեջ:



Ի շարս այլ հարցերի, Քլինթոնն անդրադարձավ նաեւ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացին ու այդ համատեքստում ստորագրված արձանագրությունների վիճակին: Մասնավորապես, ինչպես եւ քանիցս հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարը, ռուսաստանյան հեռուստաընկերության եթերից էլ կրկնեց, թե պետք է առաջ նայել, այլ ոչ թե անցյալին:

Հիշեցնելով, թե Ցյուրիխում հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմանն ինքն անձամբ էր ներկա, տիկին Քլինթոնը եթերից հայտարարեց, թե պատմական հանձնաժողովը, որ անցյալին վերաբերող բոլոր հարցերով պիտի իբր զբաղվի, գտնվում է ձեւավորման գործընթացում:

Այս հարցում թերեւս Հիլարի Քլինթոնի խոսքը կրկնություն չէ, այլ՝ նորություն, սակայն թե ի՞նչ է նշանակում հանձնաժողովի ստեղծման գործընթացը սկսելը եւ ի՞նչ վիճակում է այն՝ ԱՄՆ պետքարտուղարը չմանրամասնեց:

Ա. Հ.

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՅՑԸ ՍԻՐԻԱ

# Սիրիական հանդիպումներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սիրիա, Դամասկոս, Հալեպ

«**Ազգն**» արդեն տեղեկացրել է, որ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ Ասադի հրավերով մարտի 22-24-ը պաշտոնական այցով այդ երկրում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ: Նախագահի գլխավորած պատվիրակության կազմում են արտաքին գործերի, սփյուռքի, մշակույթի եւ գյուղատնտեսության նախարարները, պաշտոնական այլ անձինք: Սիրիայում Հայաստանի նախագահին ու հայկական պատվիրակությանը ջերմ ընդունելություն է ցուցաբերվում: Այցի առաջին օրը երկու նախագահների առանձնազրույցից եւ մեր պատվիրակության հետ ընդլայնված կազմով հանդիպումից հետո տեղի ունեցավ հայ-սիրիական մշակութային փոխշփում՝ երեկոյան Դամասկոսի օպերային թատրոնում Հայաստանի եւ Սիրիայի առաջին տիկնանց՝ Ռիտա Սարգսյանի եւ Ասմա Ալ Բաշարի բարձր հովանու ներքո Հայաստանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային թատրոնը ներկայացրեց Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը:

Երեկ Հայաստանի նախագահը դասախոսություն կարդաց Դամասկոսի համալսարանում: Նա նշեց, որ Սիրիան հայ ժողովրդի պատմության մեջ ուրույն տեղ ունեցող եւ մեզ շատ մոտ երկիր է՝ նման ճակատագրի ընդհանրությամբ, ժողովուրդների խառնվածքով եւ բազում թելերով կապված: Սիրիան եղել է այն կամուրջը, որը միացրել է մեզ արաբական եւ իսլամական աշխարհի հետ, իսկ հայերի եւ սիրիացիների պատմական ճակատագրերի զուգահեռներն ավելի են մոտեցրել մեր ժողովուրդներին: Նախագահը հիշեց, որ հենց Սիրիայի ճանապարհով է քրիստոնեությունը թափանցել Հայոց աշխարհ՝ այս երկրի տարածքից են առաքյալներ Թադեոսն ու Բարդուղեմեոսը եկել մեր երկիր՝ իրենց հետ բերելով քրիստոնեության լույսը, 4-5-րդ դարերում Ասորիքի բազմաթիվ քաղաքներում ուսանել են հայ երիտասարդներ, այդ թվում՝ Մեսրոպ Մաշտոցը: Մի խոսքով՝ քրիստոնեության տարածման եւ հայոց այբուբենի ստեղծման գործում նախագահը հիշատակեց «սիրիական հետքը»:

Նա նաեւ երախտագիտություն հայտնեց Սիրիայի քաղաքների եւ գյուղերի այն արաբ եղբայրներին, ովքեր քամահրելով մահապատժի վտանգը՝ 1915 թվականին չհանդուրժեցին մարդկության դեմ գործվող հանցագործությունը եւ ապաստան տվեցին օսմանյան իշխանության ոճրագործությունից մազապուրծ հայ մարդկանց: Նախագահ Սարգսյանը հիշեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի՝ 1970-80-ական թվականների այցերը Հայաստան, Ցեղասպանության թանգարանի մոտ նրա այն հանրահայտ խոսքը, թե Սիրիան հայերի երկրորդ հայրենիքն է. «Համոզված եմ, համաշխարհային քաղաքական գործիչների նման ժեստերը ժողովուրդների հիշողության մեջ չեն ջնջվում», ասաց Հայաստանի նախագահը: Ապա անցավ հայ-սիրիական շփումների ներկա պահին՝ նկատելով, թե անկախ Հայաստանի եւ Սիրիայի միջեւ վերջին 18 տարում ստորագրվել են մի քանի տասնյակ միջպետական պայմանագրեր, համաձայնագրեր եւ փոխըմբռնման հուշագրեր, Հայաստանի բուհերում սիրիացի եւ Սիրիայի համալսարաններում՝ հայ ուսանողներ են սովորում՝ գիտակրթական համատեղ ծրագրեր, գիտության տարբեր ոլորտներում՝ փոխհետաքրքրություն կա, գիտատեխնիկական համագործակցության մասին պայմանագրեր են ստորագրվել: Ընդհանրապես՝ Հայաստանը հետաքրքրված է արաբական աշխարհի հետ կապերն ընդլայնելու հարցում եւ այդ պատճառով էլ ներգրավված է Արաբական պետությունների լիգայում: Իսկ պատմության ընթացքում առաջացած վեճերը պետք է լուծել խաղաղ ճանապարհով՝ ուղիղ երկխոսության եւ համագործակցության միջոցով հարթեցնելով ժողովուրդների միջեւ առաջացած ատելության եւ անհանդուրժողականության պատնեշները. ըստ Հայաստանի նախագահի՝ Հայաստանն ու Սիրիան պատրաստ են շարժվելու այդ ուղղությամբ: Նա իր կողմից խոստացավ ջանք չխնայել՝ Հայաստանի եւ Սիրիայի միջեւ դարերով կառուցված կամուրջը միշտ ամուր պահելու համար, եւ ինչպիսի վերադասավորում էլ լինի տարածաշրջանում՝ դա չի կարող ազդել հայ-սիրիական հարաբերությունների շարունակականության վրա, որոնցում Հայաստանի նախագահը ապագա տեսավ:

Տես էջ 2

# Իտալիայում նույնպես գնահատվում է թուրք-իտալական բարեկամությունը

«Ազգը» տեղեկացրել էր, որ իտալական խորհրդարանը նույնպես քննարկելու է Հայոց ցեղասպանությունն ընդունող բանաձեւ: Հիշեցնենք, որ այդ երկրի մաս կազմող Կատալոնիան արդեն ճանաչել է ցեղասպանությունը: Սակայն իտալական ABC թերթը տեղեկացնում է, որ երկրի կառավարությունը շահագրգռված է, որ բանաձեւը խորհրդարանում չանցնի. «Կառավարությունը շատ լավ գիտակցում է, որ բանաձեւի ընդունումը կառաջացնի Թուրքիայի վրդովմունքը, որը ՆԱՏՕ-ում մեր կարեւոր դաշնակիցներից է: Պատահական չէ, որ արտգործնախարար Միգել Անխել Մորատինոսը արդեն խորհրդակցել է Կոնգրեսի տորին պալատի խոսնակ Խոսե Բոնոյի հետ՝ «հայկական նախաձեռնությունը» կասեցնելու համար», գրում է իտալական թերթը: Պարբերականը նաեւ մտահոգություն է հայտնել, որ թուրք-իտալական հարաբերությունները, եթե ընդունվի բանաձեւը, կհայտնվեն շվեդ-թուրքական եւ ամերիկա-թուրքական հարաբերությունների իրավիճակում: Ի դեպ, այս վիճակում էին նաեւ ֆրանս-թուրքական հարաբերությունները, սակայն Ֆրանսիան չվախեցավ այդ հեռանկարից՝ ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, հիմա էլ ֆրանս-թուրքական հարաբերությունները բավական նորմալ են, ի դեպ, նույն ՆԱՏՕ-ի շրջանակներում:

Հ. Ա.

# Իսլամական գլխավոր տոնը՝ քրիստոնյա Հայաստանում

## Պարսիկներից շատերը նախընտրում են Նովրուզը անցկացնել Հայաստանում

Այս օրերին Երեւանի փողոցները, սուպերմարկետները, հյուրանոցներն ու այլ վայրերն աչքի են ընկնում պարսիկ զբոսաշրջիկների աննախադեպ առատությամբ: Հրապարակներում, հյուրանոցներում, տուրգործակալությունների առջեւ կանգնած են նրանց Հայաստան բերած տուրիստական ավտոբուսները: Մեր հարեւան երկրի քաղաքացիներին կարելի է հանդիպել խմբերով, ընտանիքներով, զույգերով, հարազատներով, ամենուր ինչում է պարսկերենը: Եթե պարսիկ տղամարդկանց, հիմնականում գործարարներին այստեղ տեսնելն արդեն սովորական է դարձել, ապա Իրանից ժամանած, արեւմտյան ոճով հագնված արեւելյան գեղեցկուհիները մեզ համար գրեթե էկզոտիկ երեւույթ են: Եվ ընդհանրապես, եթե եվրոպական որեւէ մայրաքաղաքի համար զբոսաշրջիկների նման առատությունը սովորական կլիներ, ապա մեզ համար դա փոքր-ինչ անսովոր է եւ փոքր-ինչ շփոթված ենք: Սակայն շփոթվելու կարիք չկա:

Եթե Հայաստանում որեւէ երկրի քաղաքացիներն իրենց զգում են հանգիստ ու ապահով, նախընտրում են այստեղ անցկացնել իրենց արձակուրդները, հարգում եւ չեն խախտում երկրի օրենքներն ու հասարակական կարգը, ապա նրանց միայն գրկաբաց կարելի է ընդունել, ինչպես դա անում են զարգացած զբոսաշրջություն ունեցող երկրները:

Պարսիկները, որոնք, ի դեպ, իրենց ծագումնաբանությամբ ամենամոտն են մեզ՝ հայերիս, այստեղ են եկել տոնելու իրենց կրոնական ամենաշքանավոր տոնը՝ Նովրուզ Բայրամը: Հետաքրքրական է, բայց փաստ, հարեւան երկրի քաղաքացիներից շատերը նախընտրում են իսլամական գլխավոր տոնը նշել իրենց հարեւան՝ առաջինը քրիստոնեություն ընդունած երկրում՝ Հայաստանում: Սա դրական երեւույթ է երկու երկրների եւ ժողովուրդների համար էլ ու խոսում է այն մասին, որ մենք իսկապես պատմական շատ ընդհանրություններ ունենք, հարգում ենք միմյանց ավանդույթներն ու սովորությունները եւ կրոնական ու պետական կառավարման համակարգի տարբերություններ ունենալով հանդերձ, հանդուրժողականության եւ լավ հարեւանության օրինակ կարող ենք հանդիսանալ այլոց համար:

Ա. Մ.

AZG NEW PDF.qxd 23/03/2010 23:52 Page 1



# Կառուցել Պողոս-Պետրոս եկեղեցին՝ չքանդելով ամառային դահլիճը

## *Հանրային խորհուրդն առաջարկում է այլեւ ոչինչ չքանդել*

Հանրային խորհրդի ազգային փոքրամասնությունների, կրոնի, սփյուռքի խնդիրների, պատմական ազգային արժեքների, հուշարձանների պահպանության ու պատկանելության հանձնաժողովի երեկվա օրակարգում «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը քանդելու եւ տեղում Պողոս-Պետրոս եկեղեցին կառուցելու հարցն էր: Հետաքրքրականն այն է, որ հանձնաժողովը քննարկում էր մի հարց, որը իրավական տեսանկյունից հենց սկզբից սխալ հունով էր ընթանում: Խնդիրն այն է, որ կառավարությունն առանց մասնագետների կարծիքները հաշվի առնելու կինոթատրոնի ամառային դահլիճը հուշարձանների պահպանության ցուցակից հանել էր:

Ակադեմիկոս, ճարտարապետ **Լեոնիդ Պետրոսյանը** շինությունը համարում է բազմաթիվ երեւանցիների սիրելի վայրերից մեկը, քանդելը որակում սխալ եւ առաջարկում դիմել դատարան՝ հարցը իրավական տեսանկյունից որոշելու համար: Ճարտարապետ **Աշոտ Աբրահամյանի** համոզմունքը հետեւյալն է. դահլիճը պետք է բարեկարգել, «փոքրիկ տարածքում եկեղեցի չի կարելի կառուցել», վստահ է նա:

Բանաստեղծ, մշակութաբան **Ասքանազ Աբրահամյանին** մտահոգում է այն հարցը, որ եկեղեցի կառուցելու պատրվակով շինությունը կքանդեն ու փոխարենը ոչինչ չեն կառուցի: «Ուղղակի տարածքն է պետք եկեղեցուն, համոզված եմ, որ ոչ մի եկեղեցի չեն կառուցի, հետո տարածքը կվաճառեն ինչ-որ օլիգարխի, որն այդտեղ գիշերային ակումբ կբացի», նկատում է նա՝ չգիտես որտեղից մոգոնելով:

Ազգագրագետ **Քեթի Գունդակչյանն** էլ նեղացած է: «Եկեղեցին կարծում է, որ եթե դեմ կարծիք ենք արտահայտում, անհավատ ենք, բայց այդպես չէ: Դահլիճի պաշտպանությունը հանցանք չէ: Ի՞նչ իմաստ ունի նոր եկեղեցի կառուցել, եթե մեկ կանգառ վերեւ արդեն գործելու է եկեղեցի: Երեւանում կա 5 գործող եկեղեցի: Հիշենք Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Եղավ մրցանակաբաշխություն՝ ո՞վ շահեց ու ի՞նչ կառուցվեց: Թող կառուցվի, բայց ոչ քանդելու հաշվին: Երեւանի ծայրամասերում քանի՞ եկեղեցի կա: Քանի՞ եկեղեցի կա Զեյթունում, Արաբկիրում, Էրեբունիում: Այդտեղ ապրող մարդիկ եկեղեցու կարիք չե՞ն զգում, որ կառուցում եք միայն կենտրոնում», ասաց նա՝ առաջարկելով Պողոս-Պետրոս եկեղեցին կառուցել Զեյթուն թաղամասում:

Ճարտարապետների միության նախագահ **Մկրտիչ Մինասյանը** հավելում է.

«Մենք եկեղեցուն դեմ չենք, տպավորություն է ստեղծվում, որ մեր պայքարը եկեղեցու դեմ է, բայց այդպես չէ: Վիճում ենք կառավարության հետ, նա պարտավոր է պահպանել պետության հովանավորության տակ գտնվող ճարտարապետական հուշարձանները»:

Արշակ եպս. Խաչատրյանը նկատում է, որ դժգոհությունները հիմնականում երեք ուղղվածություն ունեն: «Առաջին խմբում դժգոհությունները հնչում են մասնագիտական տեսանկյունից: Երկրորդ խմբում զգացական որոշակի շերտ կա, հիմնավորությամբ, որ իրենց երիտասարդությունը կապված է կինոթատրոնի հետ: Երրորդ խմբում կա կանխամտածված վերաբերմունք եկեղեցու հանդեպ: Նրանք իրենց բացասական վերաբերմունքն են արտահայտում եկեղեցու հանդեպ՝ օգտագործելով կինոթատրոնի հարցը»:

Արշակ սրբազանը նկատում է, որ մինչ խորհրդային կարգերի հաստատումը 20-30.000 բնակչություն ունեցող Երեւանում եղել են բազմաթիվ եկեղեցիներ: «Հարեւանությամբ են եղել այսօրվա Կաթողիկեն եւ Պողոս-Պետրոս եկեղեցին: Օպերայի տարածքում էլ կար եկեղեցի, եկեղեցի կար նաեւ Զարենցի դպրոցի տեղում: Այդ ժամանակվա Երեւանի համար այդքան եկեղեցին շռայլություն չէր, այժմ միլիոնանոց քաղաքի համար շռայլությո՞ւն է», հռետորական հարց ուղղեց սրբազանը: Պատասխանն էլ հետեւյալն էր. դեմ չենք եկեղեցու կառուցմանը, դեմ ենք, որ մեկ այլ շինություն է քանդվում:

«Ստամբուլում ավելի շատ հայկական եկեղեցի կա, քան Երեւանում: Բացի այդ, բարերարը, որ տրամադրում է գումար, ինքն էլ որոշում է եկեղեցու տեղը», նկատեց Սրբազանը: «Կարո՞ղ է Մայր աթոռը հրաժարվել եւ ոչ ասել այդ բարերարին եւ իր առաջարկությանը», հարց ուղղեցին Հանրային խորհրդի անդամները:

Արշակ սրբազանի պատասխանը անհասկանալի էր. «Առայժմ քանդման խնդիր դրված չէ, դրված է կառուցման խնդիր»:

Հանձնաժողովը ներկայացրեց քննարկումների արդյունքում պատրաստված նախագիծը: Սակայն հոգեւորականները հրաժարվեցին լսել Հանրային խորհրդի դիրքորոշումն ու լքեցին սենյակը՝ հավելելով, որ ամեն ինչ ակնհայտ է:

Հանրային խորհրդի վերոնշյալ հանձնաժողովը որոշեց, որ կառավարության որոշումը՝ ամառային դահլիճը հանել հուշարձանների պահպանության կոմիտեի ցուցակից, իրավական հիմքեր չունի, հետեւաբար պետք է վերականգնել: Հանձնաժողովը որոշեց, որ ճարտարապետների, մշակույթի նախարարության եւ քաղաքապետարանի ներկայացրած մասնագետների խումբ կազմավորվի, որը կզբաղվի կինոթատրոնի ամառային դահլիճի վերանորոգման աշխատանքներով:

Հանձնաժողովն առաջարկեց կառավարությանը Հայ առաքելական եկեղեցուն տրամադրել Նկարիչների միության եւ «Մոսկվա» կինոթատրոնի մեջտեղում գտնվող ազատ տարածքը եկեղեցու կառուցման նպատակով կամ էլ այլ ազատ տարածք Մայր աթոռի ցանկությամբ: Հանձնաժողովը նաեւ որոշեց, որ ամառային դահլիճը 20-րդ դարի ճարտարապետական կառույց է եւ հասարակական նշանակության վայր: Այն ունի ժառանգական պատկանելություն, պետք է փոխանցվի հայ ազգին որպես ազգային արժեք ու համարվի անձեռնմխելի: Հնչեց առաջարկություն Խորեն Աբրահամյանի 80-ամյակի կապակցությամբ ամառային դահլիճը կոչել դերասանի անվամբ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Պոլսահայությունը վարժված է Էրդողանի հայտարարություններին

*1-ին էջից*

Ինչ վերաբերում է Թուրքիայում անօրինական հիմունքներով գտնվող հայաստանցիների թվին, որ Էրդողանի ներկայացմամբ ավելի քան 100 հազար է, Հասթեճյանի գնահատմամբ, վարչապետի չափազանցություն է, քանի որ երեւի թե առավելագույնը մինչեւ 10-12 հազար հայաստանցի է աշխատում ու ապրում Թուրքիայում:

«Մի կողմից, ուրախ ենք, որ հայաստանցիներն այստեղ աշխատում են ու վաստակածը ուղարկում տուն, մյուս կողմից էլ տխրում ենք, որ դեռեւս Հայաստանից դուրս աշխատանքի մեկնելու անհրաժեշտություն կա», ասում է Հասթեճյանը:

Նրա վկայությամբ, Թուրքիայում հայաստանցիներին լավ են վերաբերվում, ու թեեւ ցանկանում են արտագաղթ չտեսնել որեւէ դեպքում, բայց երբ երեւույթը կա, Հասթեճյանը ցանկանում է, որ հայերը արտերկրում գոնե լավ վերաբերմունքի արժանանան: «Թուրքիայում հայաստանցիները գոհ են իրենց աշխատանքից ու իրենց վաստակածից», վստահ է թերթի խմբագիրը:

Թեեւ համայնքի առումով այնքան էլ անակնկալ չի գնահատվում Էրդողանի հայտարարությունը, սակայն դրա պատճառը հասկանալի չէ եւս մեկ հայկական թերթի՝ «Ակօսի» խմբագիր **Սարգիս Սերոբյանի** համար: «Ինձ առավել շփոթության մեջ գցեց այն, որ վարչապետի հայտարարությունն այդքան շփոթմունքի տեղիք տվեց, թեեւ ինձ համար հասկանալի չէ, թե ինչու նման հայտարարություն արվեց», պարզաբանում է Սերոպյանը:

Նրա ներկայացմամբ, Թուրքիայում նման կարգի հայտարարությունը նորություն չէ, այլ ասվել է մի քանի անգամ: «Այս անգամ էլ նույնն էր, վարչապետը նեղ պահին հիշեց հայերին ու նման խոսքեր ասաց՝ խաղաքարտ գտնելով», կարծում է «Ակօսի» խմբագիրը:

Այդուհանդերձ, Սերոբյանը տեղի ունեցածը տգեղ երեւույթ է համարում, անվայել: Իսկ որ Էրդողանը նման հայտարարություններ անող է, նորություն չէ, թեեւ, Սերոբյանի մոտեցմամբ, հավանական է, որ հետքայլեր արվեն:

Համայնքի առումով էլ, ըստ խմբագրի, շատ մեծ անակնկալ չէր նման հայտարարությունը, «մի քիչ երեւի վարժվել ենք, համայնքում մեծ հուսախաբություն չկա»:

«Ակօսն» էլ իր հրապարակումներում հեգնանքով է վերաբերվել վարչապետի՝ հայաստանցիներին վտարելու հայտարարությանը, թե միայն հայաստանցիներով չգոհանալու դեպքում պոլսահայերին էլ թող ուղարկեն Սիրիա, Դեր-Զոր:

Ընդհանրապես Թուրքիայում հայաստանցիների թվի առնչությամբ Սերոբյանն ընդգծում է, որ կոնկրետ վիճակագրություն չկա, հատկապես որ որոշակի չէ վիճակագրական տվյալների բազան անգամ պոլսահայերի պարագայում: Այդուհանդերձ, խմբագիրը 50-70 հազար է համարում հայկական ծագմամբ Թուրքիայի քաղաքացիների թիվը, իսկ հայաստանցիների թիվը Թուրքիայում չի կարող գերազանցել 15, առավելագույնը՝ 20 հազարը: Վարչապետ Էրդողանի նշած թիվն էլ անիմաստ ուռճացված է, ու լուրջ չի կարելի համարել:

Հասկանալի է, որ Ստամբուլում սովոր են թերեւս Թուրքիայի վարչապետի այսօրինակ հայտարարություններին, սակայն աշխարհում, տարբեր լրատվամիջոցներում տարածված քննադատությունը վկայում է, որ Էրդողանի այդ խոսքերն անակնկալ էին գոնե ժողովրդավարության ու դրան համարժեք բարձր կատեգորիաների տեսանկյունից, ինչին էլ ամենախիստ գնահատականները տրվեցին աշխարհի առաջատար մամուլի էջերում:

**ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՅՑԸ ՍԻՐԻԱ**

# Սիրիական հանդիպումներ

*1-ին էջից*

**Այնուհետեւ նախագահ Սարգսյանն այցելեց ՍԱՀ ժողովրդական ժողով եւ հանդիպում ունեցավ ԺԺ նախագահ Մահմուդ Ալ-Աբրաշի, ավելի ուշ՝ Սիրիայի վարչապետ Մուհամմադ Նաջի Օտրիի հետ:**

**Հետաքրքրական էր այցելությունը Օմայան մզկիթ: Այստեղ Հայաստանի նախագահին դիմավորեց եւ ուղեկցեց Սիրիայի կրոնի հարցերով նախարար Մուհամմադ Աբդ ալ-Սատտարը:**

**Հայաստանի նախագահի պատվիրակությունը այցելեց նաեւ Դամասկոսի միակ՝ Սուրբ Սարգիս հայկական եկեղեցի: Հայաստանի նախագահին այստեղ դիմավորեցին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը, Դամասկոսի հայ կաթոլիկ համայնքի եւ հայ ավետարանական եկեղեցու առաջնորդները: Այստեղ մթնոլորտն առավել քան հայկական էր՝ Հայաստանի նախագահին եւ նրա տիկնոջը, ողջ պատվիրակության կազմին աղուհացով դիմավորող**



**հայկական տարազով աղջիկներ, հայեցի հանդիպումներին բնորոշ ջերմություն եւ հանդիսավորություն միաժամանակ:**

**Հայաստանի նախագահը ելույթ ունեցավ հավաքված հայ համայնքի ներկայացուցիչների համար, ովքեր ծափերով եւ բացականչություններով ողջունում էին նախագահին, արձագանքում նրա խոսքին: Նախագահն ասաց, որ հայ-սիրիական հարաբերությունների ապագան տեսնում է շատ փայլուն, եւ անկախ որեւէ վերադասավորումից, տարածաշրջանային ուժերի ազդեցությունից՝ երկու երկրների բարեկամությունն անխախտ է լինելու, որովհետեւ այս բարեկամությունը հազարամյակների պատմություն ունի. «Ես չգիտեմ, թե աշխարհում քանի նախագահ կարող է հպարտանալ այն հանգամանքով, որ լինելով աշխարհի ամենատարբեր երկրներում՝ հարյուրավոր եւ հազարավոր մարդիկ հավաքվում եւ ողջունում են ՀՀ նախագահին: Սա մեր հարաբերական առավելությունն է, նաեւ՝ պարտականություն՝ օժանդակելու, որպեսզի սփյուռքն էլ ավելի հզորանա, հարատեւի, իր ներուժը նաեւ օգտագործի ՀՀ-ն հզորացնելու համար», ասաց նա՝ նկատելով, թե չի կարելի ասել, որ Հայաստանում ամեն ինչ փայլուն է, տնտեսական ճգնաժամի արդյունքները, սակայն, ըստ նախագահի, կամաց-կամաց հաղթահարվում են, 2010 թվականի մի քանի ամիսները խոսում են այն մասին, որ մեր տնտեսությունը տեղից շարժվում է. «Անպայման հասնելու ենք նրան, որ մեր երկիրը բարեկեցիկ, սփյուռքին աջակցող լինի , եւ պիտի Հայաստանը կարողանանք դարձնել նման բոլոր զարգացած երկրներին, որտեղ սիրում են ապրել մեր հայրենակիցները», ասաց նախագահը՝ հավելելով, որ այս առումով հույս է կապվում մեր քույրերի եւ եղբայրների հետ, որոնք Հայաստանից դուրս են ապրում:**

**Անդրադառնալով Հայաստան-Թուրքիա հարաբերություններին՝ նախագահ Սարգսյանը հավաստիացրեց, որ երբեք, որեւէ անգամ ոչ ներկաները եւ ոչ էլ ուրիշները չեն լսի, որ կասկածի տակ է առվում Ցեղասպանությունը, կասկածի տակ է առնվում մեր ազգային խնդիրներից որեւէ մեկը, դա, ըստ նախագահի, բացառված է: Չնայած թուրքերը մեզ ցեղասպանության են ենթարկել, մեզ զրկել են մեր կենսական տարածքից, բայց մենք ուզում ենք հարաբերություններ սկսել նրանց հետ, մենք Ցեղասպանության ճանաչման հարցը որպես նախապայման չենք առաջադրում, ցանկանում ենք հաստատել հարաբերություններ եւ խոսել ամենատարբեր հարցերի մասին. ահա այս էր ձեւակերպումը հայ-թուրքական հարաբերությունների մասով. «Հասկանում եմ, որ շատ շատերի համար այսպիսի մոտեցումը գուրգուրելի չէ, քանի որ աշխարհով մեկ մեր հայրենակիցները սփռվել են ցեղասպանության պատճառով, բայց՝ հավերժ թշնամությունը որեւէ լավ բանի չի կարող բերել եւ այս ճանապարհն էլ անպայման պետք է փորձել. միգուցե այս ճանապարհով է հնարավոր թուրքերին համոզել, որպեսզի նրանք հասկանան իրենց սխալը եւ ճանաչեն Ցեղասպանությունը»:**

**Ղարաբաղի հարցում հայ-թուրքական գործընթացով պայմանավորված զիջումներ չկան եւ չեն լինելու. «Մենք պատրաստ չենք Ղարաբաղի հարցում միակողմանի զիջումների, բայց այս խնդիրը կարող է լուծվել միայն փոխզիջումների հիման վրա եւ, իհարկե, խաղաղ ճանապարհով: Երբ մեզ կառաջարկեն լուծման տարբերակ, մենք այն գաղտնի չենք պահի, հանրայնացնելու ենք այնպես, ինչպես հայ-թուրքական հարաբերությունները. եթե ժողովուրդն ընդունելի համարի՝ ընդունելու ենք, եթե ոչ՝ ոչ: Մնացած բոլոր խոսակցությունները գաղտնի պայմանավորվածությունների մասին հեքիաթներ են եւ կրկնվում են երկար տարիների ընթացքում: Մենք չենք կարող աճուրդի մեջ մտնել Ղարաբաղի խնդրում, որովհետեւ Ղարաբաղը բոլորիս համար անգին է: Մենք ոչ թե կարծր, այլ հաստատակամ դիրքորոշում ունենք սկզբունքային հարցերի վերաբերյալ, իսկ սկզբունքային հարցը ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման հնարավորությունն է: Մինչ այդ պետք է հզորացնենք Ղարաբաղը, Հայաստանը եւ բանակը», ասաց Հայաստանի նախագահը:**

**Երեկ օրվա կեսին Հայաստանի պատվիրակությունը ժամանեց Հալեպ, որտեղ Հայաստանի նախագահին դիմավորեցին Հալեպի նահանգապետ Ալի Մանսուրան, ԲԱԱՍ կուսակցության Հալեպի կառույցի ղեկավարը եւ հալեպահայ համայնքի ներկայացուցիչները: Այսօր տարբեր ձեւաչափերով տեղի կունենան հանդիպումներ հալեպահայ շրջանակների հետ:**

**Այսօրվա համար ամփոփենք՝ ասելով, որ իսկապես հայերիս համար հետաքրքրական է լինել մի երկրում, ուր հազարամյակներ առաջ նույն արեւի ու նույն երկնքի տակ պատմական Ասորիքն է եղել, որն անգամ մի պահ Տիգրան Մեծի կայսրության մաս էր, իսկ դրանից էլ ավելի առաջ այս տարածքում Գիլգամեշի եւ Էնկիդուի շունչն է զգացվել՝ այս տարածաշրջանի նախահայրենիք Շումերի եւ այլ պետությունների թագավորներն են իրենց երկրները դարձրել հետո եկող ազգերի ստեղծման խառնարան: Ի՞նչ է ժառանգել Սիրիան՝ արաբականացումից, այլոց, այդ թվում թուրքերի լծի տակ երկար տառապելուց, վերջին հարյուրամյակում տասնյակներով հեղաշրջումներից հետո, մի խոսքով՝ ինչո՞վ է շնչում Հայաստանին բարեկամ այս երկիրն այժմ, դեռ կփորձենք բացահայտել:**

# Տորք, ռասիստական հայտարարություն եւ 30 միլիարդանոց ռազմական պայմանագիր

Ամբողջ աշխարհում լիբերալ-դեմոկրատական քաղաքական ուժերի հիմնական նպատակն է ժողովրդականացնել երկրի քաղաքական ինստիտուտները, նպաստել մարդու իրավունքների, խոսքի ազատությանը, առհասարակ հասարակության ազատ լինելուն: Եվ եթե տվյալ ուժը չի փորձում իրականացնել այս ամենը, ուրեմն կամ չի գործում գաղափարախոսության համաձայն, կամ «երկիրը երկիր չէ»:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ աշխարհի տարբեր խորհրդարաններում ներկայացված բանաձեւերը հենց կոչ են անում երկրներին հավատարիմ մնալ մարդու իրավունքների պաշտպանությանը, վերականգնել արդարությունը, իսկ Թուրքիայի լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, որ թուրք հասարակության ավելի ազատ լինելու ջատագովը պետք է լինի, գտնում է, որ տարբեր երկրներում ընդունված եւ ընդունվող հայկական բանաձեւերը վնաս են առաջին հերթին հայերին, եւ, որ Հայաստանը պետք է ընտրություն անի՝ կամ հետամուտ է ցեղասպանության համաշխարհային ճանաչմանը, կամ հավատարիմ է մնում հայ-թուրքական արձանագրություններին:

Ահա այսպես, երեկ Երեւանում կայացած ասուլիսի ժամանակ եւս մեկ նախապայման մեր երկրին ներկայացրեց Թուրքիայի լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ **Ջեմ Թոփերը**: Նրա խոսքերով՝ հայ-թուրքական արձանագրությունները «տորք» են, որը, իհարկե, «անվնաս չի մնա, երբ ուտեն»: Թոփերի մեկնաբանությամբ՝ հենց «տորք ուտելով» է զբաղված հայկական լոբբին, որը նախաձեռնում է հայկական բանաձեւերի մուտքը տարբեր երկրների խորհրդարաններ, եւ այն երկրները, որոնք ընդունում են այդ բանաձեւը. «Թուրքիան կդիմանա այդ արտաքին ճնշումներին, մասնավորապես ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովի ընդունած 252-րդ բանաձեւը հետագա ընթացք չի ունենա, քանի որ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ գործում է 30 միլիարդանոց ռազմական համաձայնագիր, որն ապագայում հավակնում է դառնալ 45 միլիարդանոց», նշեց Թոփերը: Հետաքրքրական է, որ թուրք գործիչը նույնպես բանաձեւի հետագա ընթացքի կասեցումը բացահայտորեն չի հիմնավորում ցեղասպանության փաստի «կեղծվածությամբ». «Ես կարծում եմ, որ այդ



տարիներին եղել են գազանություններ, բայց ցեղասպանությո՞ւն է դա, թե ոչ, ես չգիտեմ: Երբ կարդում եմ հայ պատմիչներին՝ այո՛ ցեղասպանություն է, երբ կարդում եմ թուրքերին՝ ո՛չ: Սակայն ես հասկանում եմ, որ ցեղասպանությունը հայերիդ մեջ ազգային տրավմա է, ես հարգում եմ դա: Եվ Հայաստան կատարած իմ 5 այցելությունների ընթացքում ես մի բան եմ հասկացել. չկա մի հայ ընտանիք, որը չունենա իր պատմությունը ցեղասպանության վերաբերյալ, բայց կան նաեւ պատմություններ, որ այդ տարիներին տարբեր թուրքեր օգնել են հայերին, ես ավելի գերադասում եմ սա հիշել, իսկ առհասարակ պատմությունն ինձ ձանձրացնում է», ասաց Թոփերը՝ հրաժարվելով, իր իսկ խոսքերով, «գազանությունները» ցեղասպանություն որակելուց, իսկ այդ դեպքում ինչի՞ց էին փրկում «տարբեր թուրքերը» հայերին «այդ տարիներին»:

Ինչեւէ, պատմությունից «ձանձրացող» քաղաքական գործիչը հիշեց, որ Թուրքիայում իր՝ 60-ականների սերունդը Հայաստանի եւ հայերի վերաբերյալ լսել էր միայն «ԱՍԱԼԱ-ի ահաբեկչությունների» եւ ցեղասպանության բանաձեւերի մասին. «Սակայն այսօր Թուրքիայում բավական զգալի առաջընթաց կա, եթե դուք համոզված եք ցեղասպանության փաստի անհերքելիության վերաբերյալ, ապա ձեր նկատմամբ չեն կիրառվի իրավական պատիժներ, հնարավոր է, որ պարզապես տարբեր պիտակներ կպցնեն ձեզ»: Ի դեպ, պիտակավորման մասին, Թոփերը բավական դիպուկ պիտակավորեց սեփական երկրի վարչապետի լոնդոնյան հայտարարությունը՝ հայերի վտարման մասին. «Դա ռասիստական հայտարարություն է: Թուրքիայում ես չեմ կարդացել մի հոդված, որը չէր քննադատում Էրդողանին, այդ թվում՝ իշխանական ուժերն էին հանդես գալիս քննադատություններով», ասաց Թոփերը:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական արձանագրություններին, ապա, Թոփերի խոսքերով, դրանք Մեջլիսում սառեցվել են. «Պատճառը վարչապետ Էրդողանի առաջ քաշած նախապայմանն է՝ Ղարաբաղի հետ կապված, ձեր ՍԴ-ի որոշումը եւ տարբեր երկրներում ցեղասպանության բանաձեւերի քննարկումն ու ընդունումը», նկատեց Թոփերը: Իսկ հայ-թուրքական մերձեցման գործընթացը, թուրք գործչի կարծիքով, ամեն կերպ պետք է առաջ տանել. «Ես Հայաստան կատարած իմ 3-րդ այցելությունից հետո հանդիպեցի նախագահ Գյուլին եւ նրան ներկայացրի այն դրական ազդակները, որ տարել էի Հայաստանից: Աբդուլլահ Գյուլը թերեւս միակ թուրք պաշտոնյան է, որն իր «սիրտն ու հոգին» է դրել այս գործընթացում», շեշտեց Թոփերը: Հայ-թուրքական մերձեցումը, Թոփերի խոսքերով, կարեւոր է նաեւ այն պատճառով, որ. «Թուրքիան հնարավորություն կստանա ստիպելու ինչպես Ադրբեջանին, այնպես էլ Հայաստանին՝ լուծելու Ղարաբաղի հարցը. «Մենք լուրջ լծակներ կստանանք դրա համար», ընդգծեց թուրք գործիչը: Սակայն ո՞վ կտա Անկարային հնարավորություն՝ ստիպելու կողմերին, մանավանդ հաշվի առնելով նույն Թոփերի խոսքերը. «Ինչպես ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում հայերդ ունեք զորեղ լոբբինգ, այնպես էլ ադրբեջանցիները Թուրքիայում ունեն նույնքան հզոր լոբբինգ»: Թուրք գործիչը չմանրամասնեց, փոխարենը հիշեց Թուրքիայում իր ապրած տարիների երեք ամենախոշոր թաղումները. «Առաջինը Քեմալ Աթաթուրքինն էր, հետո՝ նախագահ Օզալինը եւ հայազգի լրագրող Հրանտ Դինքինը, կարծում եմ՝ սրանից պետք է դուք եզրակացություններ անեք, թե ինչպես ենք տրամադրված Թուրքիայում ձեր նկատմամբ»:

Այդ եզրակացությունները կազմելիս, սակայն, բացի «պատմության ձանձրալի էջերից», հայերս հիշում ենք նաեւ վարչապետ Էրդողանի՝ «100 հազար հայերի» հասցեին հնչեցրած հեռակա, «ռասիստական» սպառնալիքը:

ՆՈՎԻԿ ԱՓՅԱՆ



# Ծրագիր, որը միտված էր զբաղվածության աճին

## *Աշխատանքով է ապահովվել 1240 մարդ*

**Ավարտվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հանրային աշխատանքների «Բրիջ» ծրագիրը: 5 տարի շարունակ ծրագրի հեղինակներն ու իրականացնողները նպատակ են ունեցել հանրապետության խոցելի խմբերին օգնել հասնելու ֆինանսական կայունության եւ ինքնավստահության: Նպատակին հասնելու միջոցը հստակ էր. ստեղծել աշխատատեղեր, կազմակերպել մասնագիտական հմտությունների քը», ասաց Երեւանի պետական արդյունաբերական քոլեջի տնօրեն Ադասի Սարգսյանը:**

**5 տարվա ընթացքում կազմակերպվեց 54 դասընթաց: Նուբար Գուդսուզյանը նշում է, որ շինարարական մասնագիտությունները Հայաստանում հիմնականում սովորում են վարպետի աշխատանքին հետեւելով՝ առանց տեսական գիտելիքների, այդ իսկ պատճառով մասնագիտական գիտելիքներին ու հմտություններին**



**դասընթացներ եւ վերականգնել համայնքի համար անհրաժեշտ սոցիալ տնտեսական ենթակառուցվածքները: 7 մարզերի 20 քաղաքներում ավելի քան 700 մարդ ուսուցանվել եւ նրանցից 70 տոկոսը աշխատանք են գտել շինարարությունում: «Վերականգնվել է 40 ենթակառուցվածք, զբաղվածություն ենք ապահովել ավելի քան 87000 մարդ-օր հաշվարկով, կարճաժամկետ աշխատանք է գտել 1240 մարդ», ծրագիրն ամփոփելիս արդյունքները ներկայացրեց «Բրիջ» ծրագրի տնօրեն Նուբար Գուդսուզյանը:**

**ԱՄՆ ՄԶԳ սոցիալական ծրագրերի խորհրդատու Վոլոդիմիր Յացենկոն նկատեց, որ ծրագրով վերականգնված ենթակառուցվածքների ցանկը մեծ է՝ քաղաքային այգիներից մինչեւ երաժշտական դպրոցներ, ջրագծեր: «Ենթակառուցվածքների վերականգնումն օգտավետ ու արդյունավետ էր ե՛ւ համայնքների, որը ձեռք բերեց նոր ենթակառուցվածքներ, ե՛ւ անհատների համար, որոնք աշխատանք գտան», ասաց Վոլոդիմիր Յացենկոն: Ծրագրի ընթացքում մշակվել են շինարարական մասնագիտությունների համար ուսումնական պլաններ, որոնցից երեքը կրթության եւ գիտության նախարարության կողմից արժանացել են հավանության: «Ես հիշում եմ, թե ինչ պատասխանատվությամբ էին մշակվում այդ ծրագրերը եւ որքան մանրամասն էին նշվում ուսումնական ծրագրերի իրականացման ձեւերն ու ընթացտիրապետող որակյալ մասնագետներ շուկայում պակասում են: «Վերապատրաստված մասնագետներին աշխատանքով ապահովելիս խնդիրներ առաջացան կապալառուների հետ, որոնք սովորաբար քիչ են հաշվում աշխատանքային օրերը՝ եկամտահարկերից, սոց. վճարումներից եւ արտաժամյա վճարումներից խուսափելու համար: Սակայն մենք կարողացանք տեսական գիտելիքներ հաղորդելուց հետո մասնակիցներին նվազագույն աշխատավարձով նաեւ գործնական պարապմունքների հնարավորություն տալ, որից հետո կապալառուները նրանցից ընտրում էին իրենց համար մշտական աշխատողների», նշեց Նուբար Գուդսուզյանը:**

**Ծրագրի կարեւորությունն ու արդյունավետությունն ընդգծեց նաեւ պետական զբաղվածության ծառայության գործակալության պետ Սոնա Հարությունյանը՝ նշելով, որ հաջողությունը ճիշտ եւ համադրված աշխատանքի արդյունք էր: «Զբաղվածության ապահովումը հատկապես գյուղական համայնքներում էական է, ուր մեծ չափերի է հասնում միգրացիան գործազրկության հետեւանքով», ասաց Սոնա Հարությունյանը: ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ «Բրիջ» հանրային աշխատանքների ծրագիրը իրականացրել է Սի Էյչ Էֆ Ինթերնեշնլ կազմակերպությունը, որի առաքելությունն է աջակցել աշխարհում ցածր եկամուտ ունեցող համայնքների զարգացմանը:**

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# 10 մլն դոլար «Արդշինինվեստբանկին» OFID միջազգային ֆինանսական հիմնադրամից

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկի եւ The OPEC Fund for International Development (OFID) զարգացման ֆինանսական գործակալության միջեւ ստորագրվել է 10 մլն դոլարի վարկային պայմանագիր: Վարկը հայկական բանկին տրամադրվել է 7 տարի ժամկետով՝ փոքր եւ միջին բիզնեսի ձեռնարկությունների ֆինանսավորման ծրագրի իրականացման համար:

Պայմանագիրը ստորագրվել է OFID-ի գլխավոր գրասենյակում՝ Վիեննայում, հիմնադրամի գլխավոր տնօրեն Սուլեյման Յասիր ալ Հերբիշի եւ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ **Ներսես Կարամանուկյանի** կողմից:

Անդրադառնալով պայմանագրին, Ներսես Կարամանուկյանն ասել է. «Սա երկարաժամկետ վարկային գիծ է, որը հնարավորություն կտա նպաստելու Հայաստանի փոքր եւ միջին բիզնեսի ձեռնարկությունների զարգացմանը եւ կօգնի նրանց հաղթահարելու տնտեսական դժվար իրավիճակի հետեւանքները»:

OFID-ի գլխավոր տնօրեն Սուլեյման Յասիր ալ Հերբիշը նշել է. «OFID-ի համար սկզբունքային առաջնահերթություն է համարվում փոքր եւ միջին ձեռնարկություններին օժանդակության ցուցաբերումը: Մենք տեղեկացված ենք, որ «Արդշինինվեստբանկը» ակտիվ գործունեություն է ծավալում այս հատվածում, եւ այդպիսով լավ գործընկեր է OFID-ի ֆինանսավորման ծրագրերի համար: Մենք համոզված ենք, որ այս վարկային գիծը կօգնի «Արդշինինվեստբանկին» ընդլայնելու ՓՄՁ-ների ոլորտում մատուցվող ծառայությունների ծավալը եւ նպաստելու երկրի ընդհանուր տնտեսական զարգացմանը»:

Ա. Ս.

# «Ֆիլիպ Մորիս Ինթերնեյշնլի» հայաստանյան գրասենյակը նշեց 15-ամյակը

**«Ֆիլիպ Մորիս Ինթերնեյշնլ» ընկերության Ֆիլիպ Մորիս Սերվիսի Բ.Վ. Հայաստանի ներկայացուցչությունը երեկ նշեց Հայաստանում իր գործունեությունը սկսելու 15-ամյակը: Այդ կապակցությամբ տեղի ունեցած շնորհանդեսի ժամանակ ներկայացուցչության ղեկավար Սարգիս Ծաղիկյանն ու կորպորատիվ կապերի ղեկավար Ահարոն Թադեւոսյանը տեղեկություններ ներկայացրին այս ընթացքում ընկերության Հայաստանում գործելու մանրամասների, համաշխարհային եւ հայաստանյան շուկայում զբաղեցրած դիրքի, մեր երկրում ընկերության կողմից իրականացվող բարեգործական նախագծերի, անչափահասներին ծխելուց զերծ պահելու արշավի եւ «Ֆիլիպ Մորիս Ինթերնեյշնլի» գործունեության այլ դրվագների մասին:**

Ա. Ս.

# «Յունիբանկ»-ը կավելացնի կանոնադրական կապիտալը 2,8 մլրդ դրամով

«Յունիբանկ»-ի բաժնետերերը որոշել են ավելացնել բանկի կանոնադրական կապիտալը 2,8 մլրդ դրամով: Համալրումից հետո այն կկազմի 11,4 մլրդ դրամ: Կանոնադրական կապիտալի ավելացումը համապատասխանում է բանկի զարգացման ռազմավարությանը՝ ուղղված գործունեության ծավալների մեծացմանն ինչպես մանրածախ, այնպես էլ կորպորատիվ ոլորտներում: Կապիտալի համալրումն անհրաժեշտ է «Յունիբանկ»-ին գործունեության հետագա ընդլայնման եւ 35 տոկոսով վարկային ներդրումների ծավալների ավելացման նպատակով: 2010 թ.-ին բանկը նախատեսում է վարկային պորտֆելը հասցնել 90 մլրդ դրամի:

Այս տարվա մարտի 1-ի դրությամբ բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 108 մլրդ դրամ, գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 46 տոկոսով: 2009-ի արդյունքներով «Յունիբանկ»-ն ակտիվների ծավալով ՀՀ բանկային համակարգում զբաղեցրել է հինգերորդ տեղը: Արդյունաբերության ոլորտին բանկն ուղղել է 24,4 մլրդ դրամ՝ զբաղեցնելով առաջին տեղը ՀՀ բանկային համակարգում: Ֆիզիկական անձանց վարկավորման ծավալներով «Յունիբանկ»-ը զբաղեցրել է երկրորդ տեղը: Ֆիզիկական անձանց բաժին է ընկել բանկի վարկային ներդրումների 42 տոկոսը:

AZG NEW PDF.qxd 23/03/2010 22:51 Page 1



# Ջավախահայությունը պետք է լինի իր իրավունքների գիտակից

*Հարցազրույց «Երկիր» ՀԿ նախագահ Սեւակ Արծրունու հետ*

**- Վերջերս «Երկիր» միությունը մամլո հաղորդագրություն տարածեց, որտեղ նշվում էր, որ Վահագն Չախալյանի դեմ նոր մեղադրանքներ են առաջադրվում՝ կապելով դա Վրաստանում սպասվելիք ՏԻՄ ընտրությունների հետ: Ինչո՞վ է պայմանավորված տվյալ ընտրությունների կարեւորությունը:**

- Տեղական ինքնակառավարման մարմիններն այն հիմնական ներկայացուցչական հարթակն են, որտեղ եւ որի միջոցով ջավախահայությունը կարող է բարձրացնել իր սոցիալ-տնտեսական, լեզվական, կրթամշակութային եւ այլ բնույթի պահանջները, հետապնդել դրանց լուծումը: Ինքնակառավարման մարմինները նաեւ տարածքային միավորի բնակչության, տվյալ դեպքում՝ հայության ինքնակազմակերպման բնական հարթակ են: Վրացական իշխանությունները, իրականացնելով ջավախահայության նկատմամբ խտրական քաղաքականություն, բնականաբար միշտ էլ ձգտել են լիակատար վերահսկողություն հաստատելու հայերի համախումբ բնակության Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի ինքնակառավարման մարմինների նկատմամբ եւ դրանով վերացնելու ջավախահայության ինքնակառավարման անցանկալի դրսեւորումները, չեզոքացնել ջավախահայության իրավունքների համար պայքարի այդ պոտենցիալ օջախը:

Դրան այսօր գումարվում են Ջավախքում առաջ եկած նոր իրողություններ՝ ջավախահայությունը հետզհետե ավելի ու ավելի է գիտակցում, որ իր պահանջները «սեպարատիզմ» չեն, այլ մարդու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիաներով պաշտպանվող նորմեր: Վերջնականապես ձախողվեց վրացական իշխանությունների փորձը Վահագն Չախալյանի նկատմամբ խայտառակ դատավարության միջոցով ահաբեկելու ջավախահայությանը, ստեղծվեց Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը, հետզհետե աճում է ջավախահայության խնդիրների նկատմամբ ՀՀ իշխանությունների, հասարակական-քաղաքական շրջանակների, սփյուռքի կառույցների, միջազգային կազմակերպությունների հետաքրքրությունը:

Ջավախահայ ակտիվիստների ձերբակալությունները, տեղում համակարգված հալածանքների իրականացումը, ՀՀ-ից գործիչների Վրաստան մուտքի արգելումը, միջազգային հանրության եւ իրավապաշտպան կազմակերպություններին ապատեղեկացնելը, ինչպես նաեւ վրացական իշխանությունների այլ գործողությունները կորցրեցին իրենց էֆեկտիվությունը, արժեզրկվեցին, երբ ջավախահայությունը չընկրկեց, շարունակեց բարձրաձայնել իր լեզվի, հայեցի կրթության, հավատքի եւ ինքնության մնացած բոլոր տարրերի պահպանմանն ուղղված պահանջները:

2010 թ. մայիսի 30-ի ՏԻՄ ընտրություններին Վրաստանի իշխանությունները ձգտելու են հնարավորինս խոչընդոտել ջավախահայության իրավունքները պաշտպանող ուժերի մուտքին ինքնակառավարման մարմիններ: Վահագն Չախալյանի դեմ այս նոր մեղադրանքների առաջ գալը հենց այդ համատեքստում կատարված քայլերից է: Արդեն սկսվել են ջավախքյան այլ ուժերի, այդ թվում՝ Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհրդի անդամ-կազմակերպությունների գործիչների նկատմամբ սպառնալիքները, քայլեր են ձեռնարկվում բուն ընտրություններին ջավախահայության շահերը ներկայացնող կազմակերպությունների եւ անհատների մասնակցությունն արգելափակելու ուղղությամբ: Վերջերս Վրաստանի ընտրական օրենսգրքում ընդունված նոր փոփոխությունների համաձայն այլեւս չի թույլատրվելու նախաձեռնող խմբերի կողմից թեկնածուների առաջադրումը, եւ ընտրություններին մասնակցելու իրավունք են ստանալու միայն գրանցված կուսակցությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վրաստանում արգելված է ազգային կամ տարածաշրջանային սկզբունքով կուսակցությունների ստեղծումը (ինչն, ի դեպ, եւս այդ պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կոպիտ խախտում է), ջավախահայության իրավունքները պաշտպանող ուժերի համար էապես դժվարանալու է ընտրություններին մասնակցելը:

**- Այս տրամաբանությամբ ի՞նչ է սպասվում մայիսի ընտրություններին: Ջավախահայությունը ի՞նչ կարող է հակադրել վրացական իշխանությունների այս քայլերին:**

- Գնալով ճնշումներն ուժեղանալու են: Մտավախություն ունեմ, որ վրացական ուժային կառույցները չեն կանգնելու ո՛չ քաղաքական հետապնդումների եւ ո՛չ իսկ ֆիզիկական սպառնալիքների առաջ: Այս ամենի դիմաց հայկական կողմը պետք է լինի, ինչպես միշտ, օրինապահ, իր քաղաքական եւ քաղաքացիական իրավունքներին գիտակից՝ իր քվեի միջոցով Վրաստանի բնակչության մնացած հատվածին եւ միջազգային հանրությանն իր պահանջները լսելի դարձնելու համար:

Գալով վրացական իշխանությունների կողմից նախատեսվող ճնշումներին եւ հակաօրինական այլ քայլերին՝ ապա այստեղ նույնպես հարկավոր է շարժվել նույն տրամաբանությամբ: Առաջին հերթին պետք է ահազանգել տեղի ունեցող հակաօրինական գործողությունների առնչությամբ, անվանապես նշել ջավախքյան այն «գործիչների» անունները, որոնք որպես գործիք կծառայեն վրացական իշխանությունների ձեռքին: Բնականաբար, Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը հնարավորինս օպերատիվ կերպով հակազդելու է հակաօրինական բոլոր գործողություններին ու սադրանքներին: Մենք համոզված ենք, որ ջավախահայությունը կքվեարկի միայն այն անհատների կամ քաղաքական ուժերի օգտին, որոնք իրենց ծրագրերում կզետեղեն եւ գործնականում կհետապնդեն հայ բնակչության քաղաքական, քաղաքացիական, լեզվա-կրթական, մշակութային եւ կրոնական իրավունքների իրացման խնդիրը: Եվ ընդհակառակը, այն ուժերը, որոնք վերջին տարիներին վրացական ուժային կառույցների ուղղորդմամբ կոծկել են ջավախահայության առջեւ ծառացած խնդիրները, պառակտել, հալածել եւ տնտեսապես շահագործել են նրան, այս ընտրությունների արդյունքում կմերժվեն հայ բնակչության կողմից:

Ամեն դեպքում, եթե անգամ Վրաստանի իշխանություններին հաջողվի հակաօրինական միջոցներով ընտրությունների դաշտն արտոնել միայն իրենց հլու-հնազանդ մանկլավիկներին, ապա համոզված ենք, դա չի կանգնեցնի ջավախահայության իրավունքների համար պայքարը: Ինչ էլ ձեռնարկեն Վրաստանի իշխանությունները, ընտրությունների ո՛ր հանգրվանում էլ նրանք դիմեն բռնի եւ խարդախ միջոցների (թեկնածուների առաջադրման խոչընդոտում, ընտրապայքարի ընթացքում ճնշումներ, ընտրության օրը զանգվածային խախտումներ), մի իրողություն այլեւս անշրջանցելի է՝ ջավախքահայությունը գիտակցում է վաղվա օրվա բարօրության նախապայման հանդիսացող իր իրավունքների համար պայքարելու հրամայականը: Ինչ էլ լինի. ջավախահայությունն արդեն զանազանում է իր ազգային իրավունքների համար կանգնած գործչին պատեհապաշտ մանկլավիկից: Ինչ էլ լինի, ջավախահայությունը գիտակցում է, որ այսօր իր թիկունքին կանգնած են Հայաստանն ու սփյուռքը: Ինչ էլ լինի, ջավախահայությունը հասկացել է արդեն, որ Վրաստանում եւ Վրաստանից դուրս հաշվի են նստում իր պահանջատիրության հետ: Հետընթաց այս իրողություններից այլեւս չի լինելու:

**ԼՈՒՍԻՆԵ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Հրատապ լուծում պահանջող բնապահպանական հիմնախնդիրներ Գյումրիում

*Ըստ ՄԱԿ-ի փաստաթուղթ «ԳԷՀ-Գյումրի» զեկույցի*

Մասնագետների գնահատմամբ՝ Գյումրի քաղաքն այսօր ունի հրատապ լուծում պահանջող երկու տասնյակից ավելի բնապահպանական հիմնախնդիրներ, որոնք էապես ազդում են նրա շրջակա միջավայրի (ապրելամիջավայրի) որակի եւ բնակչության առողջության վրա: Այդ հիմնախնդիրները նախ ամփոփ ներկայացված են 2008 թվականին Գյումրու «Բիոսֆիա» հասարակական կազմակերպության հրատարակած բնապահպանական արժեքավոր տեղեկատու ուղեցույցում, ապա առավել ընդգրկուն՝ ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի «ԳԷՀ-քաղաքներ» (ԳԷՀ՝ գլոբալ էկոլոգիական հեռանկար - Գ. Մ.) նախաձեռնության շրջանակներում «Հանուն կայուն մարդկային զարգացման» հայկական ընկերակցության պատրաստած, անցած տարեվերջին լույս ընծայված «ԳԷՀ-Գյումրի» զեկույցում: Վերջինս Գյումրու շրջակա միջավայրի 2005-2008 թթ. վիճակի ու դրա ազդեցության բազմակողմ մասնագիտական վերլուծություն է՝ նաեւ համապատասխան առաջարկություններով ու հանձնարարականներով:

Գյումրու էկոլոգիական նկարագիրն ու դրա առանձնահատկությունները պայմանավորված են, նախ եւ առաջ, նրա բնական դիրքով ու պայմաններով: Քաղաքի շրջակա միջավայրի որակի վրա ազդող, «ԳԷՀ-Գյումրի» զեկույցում նշվող հիմնական բնական գործոններից են ծովի մակարդակից բնակավայրի տարածքի 1530-1560 մետր բարձրությունը, բարդ երկրաբանական կառուցվածքով ու դիրքադրությամբ պայմանավորված ուժեղ սեյսմիկությունը եւ քաղաքի երկրաբնապահպանական իրավիճակի սրման հիմնական գործոն 88-ի երկրաշարժի բազմաթիվ հետեւանքները, քաղաքի սահմաններում երկրադինամիկ գոտիների առկայությունը, լեռնային համակարգերով թույլ պաշտպանվածությամբ պայմանավորված համեմատաբար անբարենպաստ, խիստ ցամաքային կլիման՝ անկայուն, փոփոխական եղանակներով եւ ուժեղ քամիներով, պաշտպանիչ անտառաշերտերի բացակայությունը եւ այլն: Ազդեցության մյուս խումբը կազմում են բազմատեսակ մարդածին, տեխնածին գործոնները, որոնք իրենց հերթին խորացնում են քաղաքի գեոէկոլոգիական խոցելիությունը:

Չնայած այստեղ մթնոլորտի ծայրահեղ սահմանափակ մոնիտորինգին, Գյումրիում օդի մեջ անզեն աչքով էլ զգալի է մնում հատկապես փոշու անհանգստացնող մեծ քանակությունը, որն, ըստ բերված հաշվարկային տվյալների, սահմանային թույլատրելի խտությունը գերազանցում է 2,6-3 անգամ: Քաղաքի օդային ավազանի ինտենսիվ աղտոտման պատճառ են մեծ քանակով կիսաքանդ ու վթարային շենքերի եւ շինությունների, շինարարական աղբի՝ ասբոշիֆերի, քանդվող տնակներից մնացող եւ այդպես էլ չհեռացվող, մարդու առողջության համար վտանգավոր ապակեբամբակի (ստեկլովաս) առկայությունը, երկրորդային նշանակության փողոցների քանդված վիճակը կամ ասֆալտե ամուր ծածկի բացակայությունը, ձմռանը տները տաքացնելու նպատակով որպես վառելիք ամենատարբեր վնասակար տարրեր պարունակող նյութերի օգտագործումը, բնակավայրի անբավարար սանմաքրումը, քաղաքային աղբավայրի մոտիկությունն ու բարձիթողի վիճակը, այստեղ աղբի հաճախակի այրումը, անցած տարիներին քաղաքի կանաչ տարածքների կեսից ավելիի կրճատումը եւ այլն:

Հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից է շինությունների, հատկապես նկուղային տարածքների, ռադոն գազով աղտոտվածության հարցը: Սա քաղաքի շրջագծում առկա ակտիվ երկրադինամիկ գործընթացների՝ սողանքների, հողերի նստեցումների եւ այլ երեւույթների հետեւանքներից մեկն է, կենդանի օրգանիզմների ռադիոակտիվ ճառագայթահարման վտանգավոր աղբյուր: Նշելով այս մասին, զեկույցի հեղինակները լուրջ անհրաժեշտություն են համարում օդային միջավայրերի ռադիոէկոլոգիական ուսումնասիրությունների եւ դրանց հիման վրա համապատասխան հակառադոնային միջոցառումների իրականացումը, դրանց ընդգրկումը նաեւ նախատեսվող կառույցների նախագծային փաստաթղթերում:

Կենսական կարեւորության մեկ այլ խնդիր է համարվում Գյումրու ջրային պաշարների պահպանումը: Քաղաքի հարավում գտնվող, արդյունաբերական եւ կենցաղային կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանը 15 տարուց ավելի չի գործում: Վերջինս իր հզորությամբ (օրական 60 հազ. խմ) դեռ մինչ երկրաշարժը ապահովում էր կեղտաջրերի միայն 50%-ի մաքրումը, իսկ այժմ բոլոր հոսքաջրերն առանց մաքրման լցվում են Ախուրյան գետը՝ նվազեցնելով նրա ինքնամաքրման հնարավորությունը: Մարզկենտրոնի տարածքով հոսող Գյումրի, Խոր-Ղոբի եւ Չերքեզի-ձոր գետակները գործնականում վերածվել են բաց հոսող կոյուղու կոլեկտորների եւ կարող են դառնալ ստորերկրյա ջրերի աղտոտման պատճառ:

Առկա են խախտված, չօգտագործվող հողերի, քաղաքի հողածածկի ծանր մետաղներով աղտոտվածության խնդիրներ: Հետազոտված տարածքներում հողի բաղադրության մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ քիմիական տարրեր, որոնցից կապարի միջին խտությունը քարոլորտում թույլատրելի սահմանը գերազանցում է 2,35, նիկելինը՝ 2,8, պղնձինը՝ 2,9, քրոմինը եւ կոբալտինը՝ 1,5 անգամ:

Մյուսը հեղեղումների ու ցեխահոսքերի դեմ տարածքի խոցելիությունն է, որը մեծանում է միաժամանակ քաղաքի հեղեղատարներ Գյումրի եւ Կեղտոտ-ջուր գետերի ստորգետնյա մասերի ծայրահեղ բարձիթողի ու վթարային վիճակի պատճառով: Հատկապես կրիտիկական վիճակով է բնութագրվում Գյումրի գետի ստորին մասի անբավարար թողունակությամբ թունելը, որին շատ մոտ են քաղաքի երեք եկեղեցիները (Սբ Նշան, Սբ Աստվածածին, Սբ Ամենափրկիչ): Ինչպես նշվում է զեկույցում, այդ հորանցքի պատերը եւ հիմքի կառուցվածքները շարքից դուրս են եկել, իսկ ստորանցքը լցված է աղբով եւ տիղմով: Միայն նախորդ երկու տարվա ընթացքում տեղի է ունեցել հորանցքի կամարի փլուզման 4 դեպք. երեքը՝ Ամենափրկիչ եկեղեցու մոտ, մեկը՝ Աբովյան փողոցում, որի դեպքում հորանցքի վրա գտնվող տունն ամբողջովին փլուզվել է: Ըստ մասնագետների՝ այդ զարգացող գործընթացի ու այլ գործոնների համատեղ ազդեցության դեպքում չի բացառվում եւ նշված եկեղեցիների հիմքերի խարխլումը:

Այսօր քաղաքի հարավային ու հարավարեւմտյան մասերում նկատվում է ստորգետնյա գործընթացների որոշակի ակտիվացում՝ պայմանավորված ընդգետնյա տարբեր տեսակ բնական եւ տեխնածին դատարկությունների ու փորվածքների՝ թունելների, երկրադինամիկ եւ տարբեր այլ ծագման դատարկությունների գոյությամբ, քարիզների (քյահրիզ, քյարիզ, քավրիզ եւն. ստորերկրյա, գրունտային ջրերի հավաքման, հեռացման եւ օգտագործման ուրույն համակարգ) խախտմամբ, ինչի հետեւանք են որոշ թաղամասերում տեղի ունեցող դեֆորմացիաները, նստեցումներն ու փլուզումները, իսկ վերջինի դեպքում՝ նաեւ գրունտային ջրերի մակարդակի նկատելի բարձրացումը: Ահա թե ինչու օրվա հրատապ խնդիրներից են համարվում Գյումրու գեոէկոլոգիական իրավիճակի լուրջ հետազոտումն ու բարելավումը, բնական եւ տեխնածին գործընթացներից քաղաքի տարածքի ինժեներական պաշտպանությունը:

Առկա են եւ այլ բնապահպանական հիմնախնդիրներ: Վերլուծելով բնակչության առողջական վիճակի ցուցանիշները եւս, «ԳԷՀ-Գյումրի» զեկույցի հեղինակները պնդում են, որ այստեղ շատ հիվանդությունների տարածվածությունը պայմանավորված է անբարենպաստ սոցիալ-տնտեսական եւ բնապահպանական իրավիճակով: Իսկ զեկույցում արտահայտված թերեւս ամենակարեւոր միտքն այն է, որ առկա խնդիրների լուծման հստակ միջոցառումների ընտրությունը հնարավոր է «քաղաքում պրոբլեմատիկ իրավիճակների համակարգային վերլուծության եւ աղետի գոտու՝ որպես սոցիալ-էկոլոգիական-տնտեսական միասնության վերականգնման պարագայում»:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**
**Գյումրի**

ՍՊԱՌՆԱԼԻՔ

# Հ. Քլինթոն. «Իրանի դեմ կձեռնարկվեն կտրուկ եւ «վճռական» միջոցներ»

Երեկ «**Ազգը**» անդրադարձավ Իրանի հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեիի հեռուստաելույթին, որով նա դատապարտել էր ամերիկացիների երկդիմի կեցվածքը: Ասես ի պատասխան` ԱՄՆ պետքարտուղար **Հիլարի Քլինթոնի** ելույթում խոսվում է ներկայումս մշակվող հակաիրանական պատժամիջոցների մասին: Հ. Քլինթոնի խոսքերով, դրանք կլինեն ոչ միայն նախորդ պատժամիջոցների լրացումը, այլեւ խիստ եւ նույնիսկ «վճռական» ձեռնարկումներ:

Մշակվող պատժամիջոցների մասին խոսվում է Հ. Քլինթոնի նախօրոք տարածված ելույթում, որով նա հանդես կգա Հանրային կապերի ամերիկա-իսրայելական կոմիտեի (AIPAC) կոնֆերանսում:

Ելույթում նշվում է, որ Իրանի ղեկավարությունը վտանգ է ներկայացնում ինչպես սեփական ժողովրդի, այնպես էլ տարածաշրջանի մյուս պետությունների համար: Աստիճեյթեդ պրես գործակալությունը մեջբերում է պետքարտուղարի այն խոսքերը, որ եթե Իրանը ձեռք բերի միջուկային զենք, ապա դա կապակայունացնի Մերձավոր Արեւելքի իրադրությունը եւ խթանիչ գործոն կդառնա միջազգային ահաբեկիչների համար:

Պետքարտուղարը հավաստիացնում է, որ ԱՄՆ-ը լի է վճռականությամբ` կանխելու Թեհրանում միջուկային զենքի հայտնվելը: Ըստ Հ. Քլինթոնի, ԱՄՆ-ը ՄԱԿ-ի ԱԽ անդամների հետ մշակում է հակաիրանական նոր պատժամիջոցների նախագիծ` ի պատասխան սեփական միջուկային ծրագրի մանրամասնությունները բացահայտելուց Թեհրանի հրաժարման:

Իրանի միջուկային ծրագրի հետ կապված հակամարտությունը սրվեց, երբ հայտարարվեց երկրում 20 տոկոս հարստացված ուրանի առաջին քանակության արտադրության մասին: Այդ ժամանակ ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան պահանջեցին նոր պատժամիջոցների ձեռնարկում: Նրանց նախագիծը փոխանցվեց Ռուսաստանի եւ Չինաստանի ներկայացուցիչներին:

Մարտի 2-ին Փարիզում ՌԴ նախագահ **Դմիտրի Մեդվեդեւը** հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է Իրանի դեմ ձեռնարկել նոր պատժամիջոցներ, բայց դրանք պետք է լինեն «ստուգված եւ խելամիտ»: Չինաստանը` Իրանի արտաքին առեւտրական գլխավոր գործընկերներից մեկը, հետեւողականորեն հանդես է գալիս խնդրի դիվանագիտական լուծման օգտին:

# Երկրաշարժն էլ է դառնում «արհեստական»

Տոհիտակի երկրաշարժից մեկ տարի հետո Մոսկվայում ինձ զանգահարեց ռուս մի տղա եւ խնդրեց հանդիպել «կարեւոր» մի հարցի կապակցությամբ: Տղան, որ այդ տարիներին իր զինվորական ծառայությունն անցկացրել էր Հայաստանում, ինձ փորձում էր համոզել, որ այդ երկրաշարժը բնական տարերք չէր, այլ` արհեստական, տեխնիկապես իրականացված խորհրդային զինվորականության կողմից: Տղան ոչ մի փաստ չուներ ձեռքի տակ, հենվում էր ինչ-որ ենթադրությունների վրա: Անկեղծ ասած, նա լուրջ մարդու տպավորություն չթողեց, բնական է, իմ գիտելիքներն էլ տվյալ հարցում «սուղ» չէիր անվանի, եւ հայոց մամուլում «ռումբ պայթեցնելու» նրա առաջարկություններին ընդառաջ չգնացի, ինչից նա խիստ վրդովվեց:

Այս խոսակցությունը վերհիշեցի Հաիթիի նույնքան ողբերգական երկրաշարժի կապակցությամբ: Ռուսաստանյան մամուլում հաղորդումներ հրապարակվեցին այդ տարերային աղետի ոչ «բնականության», անսովորության, յուրահատկության մասին: Հետեւություններ էին արվում, որ դա ամերիկացիների սարքած գործն է: Այստեղ էլ ամեն ինչ մեծ մասամբ ենթադրական էր: Տարակուսանք էր առաջացնում առաջին հերթին ամերիկացիների պահվածքը. ինչո՞ւ նրանք անմիջապես «օկուպացրին» Պորտ օ Պրենսի օդանավակայանը, կղզու ստրատեգիական վայրերը, վերահսկելով ողջ իրավիճակը օդում եւ ցամաքում. ինչո՞ւ ամերիկացիներն աննախադեպ քարոզարշավ կազմակերպեցին իրենց «շռայլ» օգնության մասին. ինչո՞ւ նրանք ոչինչ չէին անում կղզում կարգուկանոն հաստատելու համար եւ այլն:

Սակայն այս հարցադրումների ֆոնի վրա հառնում է գլխավորը. ըստ որոշ տվյալների, ԱՄՆ-ից Հաիթի են բերվել նաեւ նորագույն տեխնիկական սարքեր երկրաֆիզիկական հետազոտությունների համար: Այստեղ են հայտնվել նաեւ ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի գիտաշխատողների մի քանի խմբեր: Ի դեպ, «մարդասիրական» օգնությունն էլ սկսվեց 2000 ծովահետեւակայինների եւ «Կարլ Վինսոն» ավիակրի մուտքով Հաիթիի մայրաքաղաք: Ահա եւ վարկած` ամերիկացիները մշակում են գերժամանակակից երկրաֆիզիկական զենք ու ուսումնասիրում են դրա լիամասշտաբ կիրառման հետեւանքները: Ավելին, չի բացառվում, որ Չիլիի եւ Թուրքիայի ավերիչ երկրաշարժերը կարող են լինել Հաիթիի «գիտափորձի» արձագանքները:

Թե ինչքանով են համոզիչ այս պնդումները, սա հարցի մի կողմն է: Մյուս կողմից, եթե նկատի ունենանք, որ ներկայիս լրատվամիջոցները վերջին շրջանում բավականին հաճախ են տարփողում առաջիկայում պատերազմների` համաշխարհային թե տարածաշրջային, բռնկման մեծ հավանականությունը, ապա նշանակում է, որ ռազմական գերտերությունները ջերմամիջուկային, քիմիական, կենսաբանական եւ մյուս հայտնի զինատեսակների հետ մշակում են նաեւ զանգվածային ոչնչացման կամ ավերման շատ այլ միջոցներ, տվյալ դեպքում` «երկրաշարժահարույց»: Եթե իրոք այդպես է, ապա առավելապես անհանգստություն պիտի դրսեւորեն Իրանը, Հյուսիսային Կորեան, Վենեսուելան: Հակաամերիկյան են...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

# Google-ը դադարեցրեց ինքնագրաքննությունը ՉԺՀ-ում




Ամերիկյան ինտերնետային հսկա Google ֆիրման դադարեցրել է գրաքննությունը Չինաստանում իրականացվող ցանցային որոնումների ժամանակ, դրանով իսկ անտեսելով պաշտոնական Պեկինի նախազգուշացումները: ՉԺՀ-ում ինտերնետից օգտվողները այսուհետեւ կփոխադրվեն Google-ի հոնկոնգյան տիրույթներ, որոնք գրաքննության չեն ենթարկվում: Այդ մասին հաղորդում է BBC-ն, վկայակոչելով Google-ի ղեկավարության հայտարարությունը:

Կալիֆոռնիական ընկերությունը հունվարին զանգահարել էր, որ ինքը դարձել է «Չինաստանից ուղղորդվող նրբահնար կիբեռնետիկական հարձակման» թիրախ: ՉԺՀ իշխանությունները Google-ին քանիցս նախազգուշացրել էին, որ պարտավոր է ենթարկվել երկրում գործող գրաքննության կանոններին:

Google-ի ավագ իրավաբան **Դեւիդ Դրամոնդի** կարծիքով, չին հաճախորդների համար գրաքննությունից զերծ Google.com.hk հոնկոնգյան տիրույթի մատչելիության ապահովումը «խնդրի խելամիտ լուծում է, որը միանգամայն օրինական է եւ կարող է Չինաստանում զգալիորեն մեծացնել տեղեկատվության մատչելիությունը»:

Դրամոնդը հուսով է, որ ՉԺՀ կառավարությունը «հարգանքով կվերաբերվի» Google-ի որոշմանը, թեեւ չի բացառվում, որ կարող է ամեն պահի շրջափակել ամերիկյան ֆիրմայի ծառայությունները:

Կիրակի օրը ՉԺՀ կառավարական լրատվամիջոցները Google-ին մեղադրեցին ԱՄՆ-ի կառավարության հետ ինչ-ինչ կապեր ունենալու մեջ: Մասնավորապես Սինհուա գործակալությունը պնդեց, թե Google-ը ամերիկյան հետախուզական ծառայություններին տվյալներ է հաղորդում իր որոնումների արդյունքների վերաբերյալ:

Ամբողջ աշխարհում Google-ը ամենատարածված որոնողական համակարգն է, սակայն Ռուսաստանում եւ Չինաստանում առաջատար չէ, նշում է BBC-ն:

ԼՐԱՀՈՍ

# «Տեխնիկական» փոխատեղումներ Ֆրանսիայի կառավարությունում

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին մի շարք պաշտոնափոխություններ է կատարել երկրի կառավարությունում, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Աշխատանքի նախարար Քսավիե Դարկոն պաշտոնանկ է արվել: Նրա տեղում նշանակվել է Էրիկ Վերտը, որն անցյալում գլխավորում էր բյուջեի նախարարությունը: Դարկոյի պաշտոնանկության պատճառը ժողովրդի դժգոհությունը հարուցած կենսաթոշակային փոփոխությունն է, նշում է Ֆրանսպրեսը:

Բյուջեի նախարար է նշանակվել Ֆրանսուա Բարուենը, որը կառավարության կազմի մեջ էր դեռ նախագահ Ժակ Շիրակի օրոք:

Երկուշաբթի օրը նախագահական գրասենյակի ղեկավար Կլոդ Գեանը, խոսելով կատարվելիք փոխատեղումների մասին, դրանք անվանել էր «տեխնիկական»: Գեանը կառավարության կազմում փոփոխությունների անհրաժեշտությունը բացատրել էր երկրում անցկացված մարզային ընտրությունների արդյունքներով: Դրանք Սարկոզիի եւ նրա զինակիցների համար դարձան ազդանշան, որ անհրաժեշտ է լայնածավալ եւ արդյունավետ պայքար սկսել գործազրկության եւ տնտեսական ճգնաժամի մյուս հետեւանքների դեմ:

«**Ազգը**» գրել է մարզային ընտրությունների առաջին փուլում սոցիալիստների տարած հաղթանակի մասին: Մարտի 21-ին անցկացված երկրորդ փուլը սոսկ ամրապնդեց ձախերի հաղթանակը եւ նախագահական կուսակցության պարտությունը: Վերջնական տվյալներով, սոցիալիստների եւ «կանաչների» դաշինքը ստացել է քվեների 54 տոկոսը, իսկ կառավարող «Ժողովրդական շարժման միությունը»` 36 տոկոսը: Ընտրողների գրեթե 9 տոկոսը քվեարկել է ծայրահեղ աջ «Ժողովրդական ճակատի» օգտին:

Անցկացված մարզային ընտրությունները ընդհանուր գծերով ցուցադրեցին երկրի քաղաքական ուժերի դասավորությունը 2012-ին կայանալիք նախագահական ընտրություններից առաջ:

# Փոթորիկ եւ խոշոր կարկուտ Ավստրալիայում

Ավստրալիայի Պերտ քաղաքի մոտ 100 հազար բնակիչներ էլեկտրաէներգիայից զրկվել են փոթորկի եւ խոշոր կարկուտի հետեւանքով: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երկուշաբթի երեկոյան սկսված քամու պոռթկումները շարունակվել են երեքշաբթի օրը: Պերտում չի գործում շատ տարհանել են: Մարտի 23-ին վնասված մի շարք դպրոցներում պարապմունքները հետաձգվել են:

Արեւմտյան Ավստրալիայի (որի կենտրոնն է Պերտը) նահանգապետ Քոլին Բառնեթը փոթորկի պատճառած վնասները գնահատել է առնվազն 100 մլն դոլար: Նրա խոսքերով, դա ամենաուժեղ փոթորիկն էր 1994-ից ի վեր:



հասարակական տրանսպորտը, չեղյալ են հայտարարված տասնյակ ավիաչվերթեր: Գոլֆի գնդակի մեծության կարկտահատիկները վնասել են ավտոմեքենաներ, տանիքներ, փշրել ապակիներ: Հորդ անձրեւները հեղեղել են տասնյակ շենքեր, առաջացրել սողանքներ:

Փոթորկի ժամանակ փլվել է հիվանդանոցներից մեկի կտուրը: Հիվանդներին եւ անձնակազմին

Օդերեւութաբանները կանխատեսում են, որ մոտ օրերս Պերտում կրկին կտեղան հորդառատ անձրեւներ, որոնք կուղեկցվեն սաստիկ քամիներով: Անձրեւներին նախորդել էր ամառային երաշտը. դեկտեմբեր-փետրվարին Պերտում տեղումները կազմել էին ընդամենը 0,2 մմ:

# Էստոնական թերթերը լույս տեսան «ազատ տողերով»

Մարտի 18-ին էստոնական վեց առաջատար թերթերը լույս են տեսել ազատ տողերով: Էստոնացի խմբագիրները իրենց բողոքն են հայտնել այն օրինագծի դեմ, ըստ որի լրագրողն այսուհետեւ, որոշ դեպքերում, պարտավոր է հայտնել իր սկզբնաղբյուրը: Օրինագծի համաձայն, եթե լրագրողը հրաժարվում է այդպես վարվել, ապա պետք է ենթարկվի մեծ տուգանքի կամ ազատազրկման: Բողոքարկող լրագրողների համոզմամբ, վերոհիշյալ օրինագիծը հստակապես կխոչընդոտի (եթե ոչ կկասեցնի) հետաքննող լրագրողների գործունեությանը:

Ազատ տողերով լույս տեսնելու որոշումը թերթերը հիմնավորել են հետեւյալ կերպ. «Հենց սա է սպասում Էստոնիային օրինագծի ընդունումից հետո»:

Էստոնիայում ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ, որը պետք է ուսումնասիրի շահագրգիռ բոլոր կողմերի տեսակետները:

Գաղտնիք չէ, որ մեր երկրում նույնպես ներկայացված է համապատասխան օրենքի փոփոխությունը, սակայն, իհարկե, որեւէ աշխատանքային խումբ չի ստեղծվել` բոլոր կողմերի տեսակետներին ծանոթանալու համար, բայց օրինագիծն արդեն անցել է խորհրդարանում առաջին ընթերցմամբ:

Հ. ԱՓՅԱՆ

AZG NEW PDF.qxd 23/03/2010 22:52 Page 1



# «Արյունոտ Կիրակին» փառատոնի լավագույն ֆիլմն է

Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակը եւ Մեծ Բրիտանիայի դեսպանատունը կազմակերպել են «Բրիտանական ֆիլմերի 8-րդ փառատոնը», որը բացվեց Օսկարի արժանացած «Դքսուհին» ֆիլմի ցուցադրությամբ:

Արդեն ավանդույթ դարձած ամենամյա փառատոնը կոչված է ֆիլմարվեստի միջոցով հայ հանդիսատեսին ներկայացնել Միացյալ Թագավորությունը, երկրի անցյալն ու ներկան, մշակույթը, կենցաղն ու սովորույթները, ինչպես նաեւ ֆիլմերի օգնությամբ նպաստել անգլերեն լեզվի տարածմանը: Այս տարվա փառատոնից գոյացած ողջ հասույթը կուղղվի Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի տեխնիկական աջակցմանը: Մինչեւ մարտի 26-ը փառատոնի շրջանակներում կցուցադրվեն բրիտանական արտադրության եւ բազմաթիվ մրցանակների արժանացած 6 ֆիլմեր, կլինեն քննարկումներ: «Արձագանքներ. ֆիլմեր Հյուսիսային Իռլանդիայից» ծրագրի շրջանակում երեկ ցուցադրվեց ռեժիսոր **Փոլ Գրինգրասի** «Արյունոտ Կիրակին» 100 րոպեանոց ֆիլմը, որտեղ ականատեսների ու ձեռք բերված փաստերի, փաստաթղթերի հիման վրա ներկայացվել է Հյուսիսային Իռլանդիայի Դերրի քաղաքում 1972 թ. հունվարի 30-ին կայացած քաղաքացիական իրավունքի երթի 13 անզեն մասնակիցների սպանությունը՝ բրիտանական զինվորների կողմից: Այդ օրը ժողովուրդն անվանեց Արյունոտ Կիրակի եւ դեպքը շրջադարձային եղավ ժամանակակից իռլանդական հիմնախնդրում, որը փոքր լարվածության կոնֆլիկտը վերածեց քաղաքացիական պատերազմի եւ 25 տարվա բռնության:




Այդ դեպքերի ականատես **Դան Մալանը**, որը նաեւ ֆիլմի համապրոդյուսերն է, երեկ հանդիպեց հայ լրագրողների հետ: Հանդիպմանը ներկա էր եւ հյուրին ներկայացրեց Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Արեւիկ Սարիբեկյանը**: Բրիտանական խորհրդի հրավերով Հայաստան ժամանած Դան Մալանն իռլանդացի հասարակական գործիչ է եւ մեդիա պրոդյուսեր: Նա հեղինակել եւ խմբագրել է մի քանի գրքեր եւ վավերագրական ֆիլմեր, համապրոդյուսեր է երեք մրցանակակիր ֆիլմերի «Արյունոտ Կիրակին», «Օմաղը» եւ «Երկնային հինգ րոպեն»: Մալանը շրջագայել է աշխարհի շատ երկրներ ու դասախոսել է արդարության, խաղաղության եւ մարդու իրավունքների պաշտպանության թեմաներով, արժանացել բազմաթիվ մրցանակների:

Ասուլիսին փոքր-ինչ ուշանալը, ինչպես նշեց պրն Մալանը, Ծիծեռնակաբերդ այցելությունն էր, որը շատ հուզել էր նրան թանգարանում ցեղասպանության կադրերը դիտելուց հետո: «Ես բազմաթիվ զուգահեռներ եմ տեսնում Իռլանդիայի եւ Հայաստանի պատմությունների միջեւ: Ես հիանալի մեկ ժամ անցկացրի Մատենադարանում ու ծանոթացա այդ հնագույն ձեռագրերին, ինչից ունեն նաեւ իռլանդացիները: Իմ հոգին շատ վշտացրեց Հայոց ցեղասպանության մասին լսելը եւ ծանր զգացողություն առաջացրեց իմ մեջ: Ինձ համար իսկապես տարօրինակ է, որ կգտնվեն մարդիկ, որոնք կարող են մերժել կամ ժխտել Հայոց ցեղասպանության փաստը: Կարծում եմ, որ շատ կարեւոր է, որպեսզի մենք հիշենք պատմությունը, բայց միեւնույն ժամանակ չդառնանք այդ պատմության գերին, անկախ նրանից թե որ տեսանկյունից ենք դրան անդրադառնում: Ինչպես Հայաստանը, մենք նույնպես ունենք հսկայական սփյուռք ամբողջ աշխարհում, որն առաջացել է 19-րդ դարի կեսերին «Մեծ սովի» պատճառով: Ավելի քան մեկ միլիոն մարդ մահացավ եւ 30 տարվա ընթացքում մեր բնակչությունը կիսվեց, քանի որ 3 միլիոն մարդ հեռացավ»: Այնուհետեւ մանրամասն անդրադառնալով իռլանդացիների պատմությանը նա զուգահեռներ անցկացրեց ու իրենց բաժին հասած ճակատագիրը անվանեց «հոլոքոստ կամ ցեղասպանություն», որի ականատեսն էր եղել 15 տարեկան հասակում ու տեսել բազմաթիվ վիրավորների, զոհերի... «եւ այստեղ այսօր ներկայանում եմ հայերին որպես շատ հպարտ իռլանդացի, եւ նշում, որ աշխարհում հայերը նույնպես հայտնի են իրենց հպարտությամբ»:

Նշենք, որ Բրիտանական խորհրդի այս ծրագիրը իրականացվում է Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Թուրքիայում եւ Ուկրաինայում՝ նպատակ հետապնդելով արվեստի միջոցով նպաստել կոնֆլիկտային իրավիճակներում հայտնված կողմերին, միջմշակութային երկխոսության կայացմանը: Եվ քանի որ «Արյունոտ Կիրակի» ֆիլմն արդեն ցուցադրվել է Թուրքիայում եւ Բաքվում, ուստի **«Ազգին»** հետաքրքրում էր, թե ի՞նչ արձագանքներ ու անդրադարձներ են եղել, եւ արդյո՞ք Հայոց ցեղասպանության մասին հարց բարձրացվել է: Պրն Մալանը նշեց, որ շատ դժգոհ է Բաքու կատարած այցից, որտեղ ֆիլմը միայն լրագրողների համար փակ դիտում էր կազմակերպված, որից հետո էլ եղել է փոքր քննարկում: Դժգոհ էր, որ իրեն անգամ չեն ուղեկցել ու ծանոթացրել Ադրբեջանի պատմությանը եւ ինքը միայնակ ստիպված է եղել շրջել ու որոշ չափով ծանոթանալ դրանց: Իսկ Հայաստանում նրա նկատմամբ ուշադրությունը պարզապես հիացրել էր ու գոհունակություն պարգեւել: Անդրադառնալով Թուրքիային նշեց, որ ֆիլմը ցուցադրվել է Դիարբեքիրում, որտեղ մեծամասամբ քրդեր են բնակվում եւ նրանք էլ ունեն թուրք իշխանությունների հետ շատ խնդիրներ ու հակասություններ, ընդունվել է մեծ հետաքրքրությամբ: «Ես հենց այդտեղ տեղեկացա 1915 թվին հայերի նկատմամբ տեղի ունեցածին՝ ցեղասպանությանը հենց սկզբից: Ինձ այդ այցի ընթացքում ուղեկցում էին երիտասարդ թուրքեր, ովքեր շատ զգացված էին խոսում Հայոց ցեղասպանության մասին ու ինձ պատմեցին Հրանտ Դինքի մասին: Ես խնդրեցի ինձ տանել նրա գերեզմանին իմ հարգանքի տուրքը մատուցելու համար եւ պետք է ասեմ, որ դա ամենազգայուն պահերից էր, երկու շաբաթյա այդ տարածաշրջան կատարած իմ այցի ընթացքում»: Այնուհետեւ պրն Մալանը ցույց տվեց մի գիրք, որի հեղինակին՝ Մալիք Յալթինին գրել ու կարդալ է սովորեցրել Հրանտ Դինքը: Եվ հենց այդ մարդն է հոգ տանում այն գերեզմանատանը, որտեղ թաղված է Դինքը ու նրա տապանաքարի վրա գրված է մի բանաստեղծություն, որի հեղինակը հենց այդ թուրքն է: «Երբ շրջվեցինք, տեսանք, որ նա կանգնած էր քիչ հեռու ու երբ մոտեցավ ասաց, որ ամեն առավոտ առաջինն է գալիս Դինքի շիրիմին այցի, բարի օր է մաղթում նրան ու լուռ զրուցում նրա հետ: Մալիք Յալթին մեզ ասաց, որ Հրանտ Դինքի հետ այդ լուռ զրույցների ընթացքում ծնունդ են առել 50 բանաստեղծություններ: Երեւի գիտակցում է, որ անհրաժեշտություն կա, որ ամբողջ աշխարհում պատմական վերքերը իսկապես բուժվեն: Ես էլ եմ գիտակցում, որ հակասությունները, ցավոտ հարցերը պետք է լուծել հակամարտող կողմերում լավ մարդկանց, ընկերների միջոցով, որոնք իշխանական թեւում չեն, այլ պարզ ու հասարակ մարդիկ են ու շատ բան կարող են անել հակամարտությունը լուծելու խնդրում, քանզի նրանք օժտված են մարդասիրական ուժով: Եվ կարծում եմ Հայող ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով կգտնվեն մարդիկ, որ կֆինանսավորեն մեկ հատուկ համատեղ ֆիլմ, նվիրված աշխարհի ցեղասպանություններին: Երեւանից ես գնում եմ հրաշալի տպավորություններով: Եվ աշխարհով մեկ շրջելուց եկա այն եզրահանգման, որ Երեւանը աշխարհում ամենաապահով քաղաքն է, որտեղ օտարը իրեն ապահով ու հանգիստ է զգում»:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Քյոֆթերի շնորհանդեսը հետաձգվել է

## Դեմոյանի գրքի շնորհանդեսը՝ ապրիլի 6-ին

**Ուոթերթաունից (Մասաչուսեթս) խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ այսօր՝ մարտի 24-ին «Ամերիկայի հայկական գրադարան եւ թանգարան» (ԱՀԳԹ) կազմակերպության շենքում կայանալիք Օսման Քոֆթերի գրքի շնորհանդեսը «անորոշ ժամանակով հետաձգվել է անխուսափելի բարդությունների պատճառով»: Ազգությամբ թուրք Օսման Քյոֆթերը ներկայացնելու էր «Ազգի» ընթերցողներին ծանոթ իր «Հայերը Թուրքիայում՝ 100 տարի առաջ» բացիկների ալբոմը:**

**Ըստ հաղորդագրության ԱՀԳԹ-ի առաջիկա միջոցառումը լինելու է Երեւանի ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն դոկտ. Հայկ Դեմոյանի գրքի շնորհանդեսը՝ ապրիլի 6-ին: Նա ներկայացնելու է «Հայկական սպորտն ու մարմնամարզությունը Օսմանյան կայսրությունում» իր նոր գիրքը եւ քննարկելու է «Հայերի պատերազմներն ու ռազմարվեստը» 50 հատորանոց հանրագիտարանի առաջին երկու հատորների բովանդակությունը՝ «Բրոնզե դար» եւ «Վանի թագավորությունը»:**

Հ. Ծ.

91 ՏԱՐԻ ՀԵՏՈ

# Վերստեղծվել է «Լքված Հայաստան» համր ֆիլմը

## Ցուցադրումը մարտի 24-ին Գլենդելի գրադարանում

**Հովանավորությամբ Գլենդելի Հանրային գրադարանի, Արարատ-Էսքիճյան թանգարանի եւ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (ՀՈՒՀԱԱ), չորեքշաբթի օրը մարտի 24-ին երեկոյան ժամը 7.30-ին Գլենդելի կենտրոնական գրադարանում տեղի է ունենալու «Լքված Հայաստան» համր ֆիլմի նորացված տարբերակի ցուցադրումը, որին ուղեկցելու են ֆիլմարվեստի պատմաբան Էնթընի Սլայդի մեկնաբանությունները, տեղեկացնում է այդ առթիվ խմբագրությանը հասցեագրված մամուլի հաղորդագրությունը:**

**Վետերան ֆիլմարտադրող Օսկար Ապֆելի ռեժիսուրությամբ նկարահանված ֆիլմը առաջին անգամ ցուցադրվել է 1919 թվականին եւ արժանանալով մեծ ուշադրության, նպաստել է այդ ժամանակ գործող «Օժանդակություն Մերձավոր Արեւելքին» կազմակերպության նախաձեռնած հանգանակությունների հավաքմանը: Ֆիլմը հիմնված է 1918-ին առաջին անգամ անգլերեն լեզվով լույս տեսած հայկական եղեռնից մազապուրծ փրկված Ավրորա Մարտիկանյանի «Լքված Հայաստան» կամ «Հոգիների աճուրդը» վերնագրված հուշերի վրա: Անհավատալի է, բայց փաստ, որ Մ. Նահանգներ հասնելուց ընդամենը մի քանի ամիս անց Մարտիկանյանը շաբաթական 15 դոլար հոնորարով դեր է ստանձնել այդ ֆիլմում եւ վերստին ապրել ցեղասպանության սարսափելի տեսարանները:**

**Ֆիլմը դրանից հետո երկար ժամանակ մոռացության է մատնվել, մինչեւ որ 1997-ին ֆիլմարվեստի պատմաբան Էնթընի Սլայդը, ով ավելի քան 70 գրքերի հեղինակ է, հրատարակել է «Լքված Հայաստանը եւ Օրորա (Ավրորա) Մարտիկանյանի պատմությունը» խորագրով ուսումնասիրությունը, որտեղ ներկայացրել է նաեւ հայուհու գրած հուշագրության բնագիրը եւ դրա հիման վրա ստեղծված ֆիլմի պատմությունը: Այդ երեւույթը առիթ է դարձել, որ «Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության կենտրոնի» աշխատակից Ռիչարդ Քլոյանը երեւան հանի համր ֆիլմի բնօրինակը եւ դրանից պատրաստի 24 րոպեանոց նոր տարբերակը, որին նա ավելացրել է պատմական համապատասխան առաջաբան, ենթավերնագրեր, եւ երաժշտություն: Նա ներկա է գտնվելու ֆիլմի ցուցադրմանը: Երեկոյի ընթացքում վաճառվելու են ֆիլմի DVD տեսագրությունները:**

**Հավելյալ տեղեկությունների համար այցելել «Egrigorian@ci.glendale.ca.us», «hq@naasr.org» կամ «ararat-eskijian-museum @netzero.net» կայքերը:**

Հ. Ծ.

### «Աշոտ Տոնոյան» բարեգործական հիմնադրամի հաշվետվությունը 2009 թ. գործունեության մասին

«Աշոտ Տոնոյան» բարեգործական հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից՝ 22.02.2007 թ.-ին, գրանցման համարը 222.160.00696, վկայականի թիվը 03 Ա 075144, գտնվելու վայրն է՝ ք. Երեւան, Գոգոլի փող. 5 շ., բն. 18:

«Աշոտ Տոնոյան» բարեգործական հիմնադրամը, Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն եւ Նոր Նորք թաղային համայնքների սոցիալապես անապահով բնակիչների, ինչպես նաեւ մի շարք բարեգործական եւ հասարակական կազմակերպություններին օժանդակման աշխատանքների շրջանակներում իրականացրել է գործունեություններ հետեւյալ ուղղություններով.

- ֆինանսական օգնությունների տրամադրում՝ բուժման նպատակով օգնության տրամադրում, կենցաղային խնդիրների հետ կապված օգնությունների տրամադրում
- սոցիալապես անապահով ընտանիքների ուսման վարձերի վճարում.
- օգնություն մանկատներին եւ հատուկ դպրոցներին.
- այլ բարեգործական ծրագրեր:

«Աշոտ Տոնոյան» բարեգործական հիմնադրամի 2009 թ.-ի ֆինանսավորման աղբյուրն է հիմնադիր Աշոտ Տոնոյանը:

Հիմնադրամի հնարավոր շահառուներն են.

- Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքը,
- Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի սոցիալապես անապահով խավերը,
- սպորտի եւ ֆիզկուլտուրայի բնագավառի գործիչները,
- հայկական սպորտի վետերանները, երիտասարդ մարզիկները,
- բազմաբնույթ մարզական միջոցառումների մասնակիցները,
- կրթամշակութային եւ սպորտային կազմակերպությունները,
- սպորտային կրթության եւ մարզման կարիք ունեցող երեխաները:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.

Աշոտ Տոնոյանը
Ռոբերտ Տոնոյանը
Լաուրա Տոնոյանը
Անահիտ Տոնոյանը

Հիմնադրամի աշխատակիցների թիվը առ 31.12.2009 թ. կազմում է 1 մարդ:

Ֆինանսական տարվա ընթացքում օգտագործված միջոցների չափը կազմել է 8.842.000 (ութ միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար դրամ) ՀՀ դրամ.

- դրանցում վարչակառավարչական ծախսերի չափը՝ 754.000 (յոթ հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ,
- ֆինանսական օգնությունների համար տրված միջոցների չափը՝ 1.390.000 (մեկ միլիոն հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ,
- ուսման վարձերի համար տրված միջոցների չափը՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,
- հասարակական եւ բարեգործական կազմակերպություններին, մանկատներին եւ հատուկ դպրոցների աջակցման եւ օգնության համար տրամադրված միջոցների չափը՝ 1.140.000 (մեկ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,
- բարեգործական ակցիաների կազմակերպման համար տրամադրված միջոցների չափը՝ 1.250.000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,
- միջոցառումների, համերգների կազմակերպման եւ այլ բարեգործական ակցիաների կազմակերպման համար տրամադրված միջոցների չափը՝ 2.054.000 (երկու միլիոն հիսունչորս հազար) ՀՀ դրամ,
- շինարարական վերանորոգման աշխատանքներին հատկացված միջոցների չափը՝ 1.650.000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Հոգաբարձուների խորհրդի անդամները չեն օգտվել հիմնադրամի միջոցներից:




Տնօրեն՝ Արմինե Տոնոյան

# Մրցաշրջանը մեկնարկեց գավաթային հանդիպումներով

Երկու հանդիպումներով մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի գավաթի 19-րդ խաղարկությունը: «Հանրապետական» մարզադաշտում երկրի չեմպիոնն «Փյունիկը» հյուրընկալել էր բարձրագույն խմբի նորեկ «Իմպուլսին»: Խաղն անցավ փյունիկցիների նկատելի առավելությամբ: Թվում էր, թե «Իմպուլսի» փորձառու ֆուտբոլիստները լուրջ դիմադրություն ցույց կտան չեմպիոնի երիտասարդ խաղացողներին, սակայն սպասելիքները չարդարացան: «Իմպուլսը» հիմնականում պաշտպանվում էր, գրոհում էր փոքր ուժերով, որի հետեւանքով էլ չկարողացավ լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Միակ գոլային իրական պահը «Իմպուլսը» ստեղծեց 69-րդ րոպեին, երբ Արման Մինասյանը մեն-մենակ հայտնվեց դարպասի դիմաց, սակայն հարվածը թույլ էր ու դարպասապահը հանգիստ որսաց գնդակը:

«Փյունիկը» եւս գոլային մի քանի պահեր չօգտագործեց: Արդեն 7-րդ րոպեին Գեւորգ Ղազարյանը մոտ տարածությունից վրիպեց: 15-րդ րոպեին Կառլեն Մկրտչյանի հարվածը ցնցեց դարպասի հորիզոնական ձողը: 2-րդ խաղակեսում էլ փյունիկցի Ալբերտ Թադեւոսյանը մեն-մենակ հայտնվելով դարպասապահի դիմաց, բարձր հարվածեց:

Իսկ թե ինչպես պետք է գոլ խփել, ցուցադրեց բրազիլացի Մարկոսը՝ գնդակն ուղարկելով դարպասի վերին անկյունը: Այդ գոլն էլ վճռեց հանդիպման ելքը:

**Վարդան Մինասյան («Փյունիկ»)**-Սպասում էինք, որ նման լարված հանդիպում է լինելու, քանի որ «Իմպուլսը» լավ համալրում է ստացել: Իհարկե, դիլիջանցիների խաղը չէի տեսել, ուստի չեմ կարող ասել, թե որքանով մրցակիցը դրսեւորեց իրեն: Սա գավաթային հանդիպում էր, որտեղ թույլ մրցակիցներ չկան: Գոհ եմ «Փյունիկի» ցուցադրած խաղի որակից՝ հաշվի առնելով, որ մրցաշրջանի մեկնարկային հանդիպումն էր: Պարզապես վերջին 20 րոպեներին ֆուտբոլիստների գործողություններում զգալ տվեց հոգնածությունը: Խաղի սկզբից բավական բարձր էր տեմպը, ինչն այս ժամանակաշրջանի համար մինչեւ վերջ պահպանելը շատ դժվար է: Գոլային որոշ պահեր չիրացրինք: Բայց ամեն ինչ առջեւում է: Փորձեցինք փոխարինումներով սրել թիմի խաղը հարձակման գծում: Կառլեն Մկրտչյանը վնասվածքով էր խաղում, ուստի փոխարինեցինք:

Տրանսֆերային պատուհանը փակվեց եւ «Փյունիկը» հասցրեց միայն հայտավորել նիգերիացի կիսապաշտպան Էկստեբային, որը մասնակցել էր ԱՊՀ գավաթի խաղարկությանը: Նրա տրանսֆերն արդեն ստացել ենք: Նա մոտ օրերս կմիանա թիմին: Իսկ Մանուկ Մուրադյանը փորձաշրջան է անցնում մեզ մոտ, նրան ավելի շատ դիտարկում ենք մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականի համար: Եթե իրեն լավ դրսեւորեց, կխաղա «Փյունիկ-2-ում»:

**Ստեփան Բաղդասարյան** («Իմպուլս»)-Սա մրցաշրջանի առաջին խաղն էր, ուստի որոշ լարվածություն կար մեր ֆուտբոլիստների գործողություններում: Նաեւ հաշվի առեք, որ խաղում էինք հայկական ֆուտբոլի առաջատարի հետ: Ընդհանուր առմամբ մեր թիմն այսօր իր հնարավորություններից ցածր հանդես եկավ: Գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանն էլ դժգոհ էր խաղից: Հույս ունեմ, որ պատասխան խաղում մենք ավելի լավ կդրսեւորենք մեզ, կցուցադրենք այն, ինչին ընդունակ ենք:

Թիմում կան ֆուտբոլիստներ, որոնցից ակտիվ խաղ էինք ակնկալում, սակայն սպասելիքները չարդարացրին: Իր ազդեցությունն ունեցավ նաեւ Արամ Հակոբյանի վնասվածքը, որի պատճառով նա թողեց խաղադաշտը: Սակայն նույնիսկ այսպիսի խաղով կարող էինք չպարտվել, եթե Արման Մինասյանն իրացներ գոլային հիանալի պահը: Ամեն ինչ դեռ առջեւում է, մրցակիցների հաջորդ փուլ դուրս գալու հնարավորությունները հավասար եմ գնահատում:

Կապանում մրցեցին «Գանձասարն» ու «Ուլիսը»: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: 47-րդ րոպեին հաշիվը բացեց կապանցի Արսեն Ավետիսյանը, 78-րդ րոպեին ուլիսցի Արտյոմ Ադամյանը 11 մ հարվածով վերականգնեց հավասարակշռությունը:

Այսօր կկայանան քառորդ եզրափակիչի մյուս երկու հանդիպումները: «Միկան» կհյուրընկալի «Կիլիկիային», իսկ Գյումրիում կմրցեն «Շիրակն» ու «Բանանցը»:

ԹԵՆԻՍ

# Ֆեդերերն առաջինն է 114 տարվա ընթացքում

Վերջին տարիների աշխարհի լավագույն թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը դարձել է թենիսի Շվեյցարիայի ֆեդերացիայի պատվավոր անդամ: Պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել Բեռնում: Կազմակերպության 114-ամյա պատմության ընթացքում Ֆեդերերն առաջին գործող մարզիկն է, որ նման պատվի է արժանանում: Ճիշտ է, Ֆեդերերը ներկա չէր արարողությանը: Նրա փոխարեն պարգեւը ստացավ թենիսիստի կնքահայրը՝ Արթուր Դուբախը:

«Շատ ուրախ եմ ու հպարտ Ֆեդերերին հասանելիք պարգեւը ստանալու համար: Ֆեդերացիայի պատվավոր անդամ լինելը մեծ պատիվ է Ֆեդերերի համար: Նրա անունից հայտնում եմ շնորհակալությունս», նշել է Դուբախը:

Ֆեդերերը ներկայումս մեծ առավելությամբ գլխավորում է թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակը: Նա վաստակել է 11035 միավոր, իսկ 2-րդ տեղում ընթացող սերբ Նովակ Ջոկովիչն ունի 8220 միավոր:

# Ոսկանյանն արդյունավետ խաղ է ցուցադրում

«Միկայի» նախկին հարձակվող Արամ Ոսկանյանն իրեն հիանալի է դրսեւորում Տաշքենդի «Լոկոմոտիվի» կազմում: Ուզբեկստանի գավաթի 1/16 եզրափակիչում «Լոկոմոտիվը» 7-0 հաշվով ջախջախեց «Դինամո-Գալակորին»: Ոսկանյանն այդ խաղում դարձավ հեթ-տրիկի հեղինակ: Հիշեցնենք, որ առաջնության մեկնարկային խաղում էլ Արամը 2 գոլ էր խփել՝ ապահովելով իր թիմի հաղթանակը:

# Սկսվել է տոմսերի հայտերի ընդունումը

2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի կազմկոմիտեն սկսել է մրցումների տոմսերի հայտերի ընդունումը: Վաճառքի կհանվի 10 մլն տոմս, որից 8 մլնը նախատեսված է օլիմպիական խաղերի, 2 մլնը՝ պարաօլիմպիադայի համար: Տոմսերի 75 տոկոսը կբաշխվի Մեծ Բրիտանիայի եւ Եվրոմիության երկրների միջեւ: Բնականաբար, հնարավոր չի լինի բավարարել ներկայացված բոլոր հայտերը: Ուստի տոմսերի բաշխումը կկատարվի վիճակահանությամբ:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Զինիշյան» հիշատակի

հիմնադրամի 2009թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Զինիշյան» հիշատակի հիմնադրամ (ԶՀՀ):

2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի ,–01–ե–10––99– թ. թիվ –1576 հրամանով, պետական գրանցման վկայական՝ 35 եւ (կամ) Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից ,–22–ե–12–– 05–– թ., պետական գրանցման վկայական՝ –03– Ա –070267:

3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Բաղրամյան պող. 58, բն.21 հեռ. 544417 / 18

4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝

Էլիզա Մինասյան, աշխատավարձ

5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝

Վիկտոր Մակարի

Սարա Լիշերնես

Սարա Թոդդ

Ջուդի Սեմարիա

Էլիաս Սահունի

6. Աշխատակազմը՝

Էլիզա Մինասյան, աշխատավարձ

Արմեն Հակոբյան, աշխատավարձ

Զարուհի Սահակյան, աշխատավարձ

Աշոտ Ասլիկյան, աշխատավարձ

Ռուբեն Կրիկյան, աշխատավարձ

Գեւորգ Աբոյան, աշխատավարձ

Զարուհի Զանիբեկյան, աշխատավարձ

Սամսոն Ասատրյան, աշխատավարձ

Լաուրա Ավանեսովա, աշխատավարձ

Կարինե Միլեթբաշյան, աշխատավարձ

Հասմիկ Սեւումյան, աշխատավարձ

Հարություն Ղարիբջանյան, աշխատավարձ

Հեղինե Պապիկյան, աշխատավարձ

Անահիտ Գալիկյան, աշխատավարձ

Տիգրան Աթանեսյան, աշխատավարձ

Արմեն Այունց, աշխատավարձ

Մարատ Դադունց, աշխատավարձ

Աստղիկ Հովեյան, աշխատավարձ

Սյուզան Հովսեփյան, աշխատավարձ

Աստղիկ Հովսեփյան, աշխատավարձ

Հռիփսիմե Հովակիմյան, աշխատավարձ

Արման Եգանյան, աշխատավարձ

Զարուհի Համբարձումյան, աշխատավարձ

Իշխան Նադարյան, աշխատավարձ

Նազելի Ալեքսանյան, աշխատավարձ

Նորվարդ Ավագյան, աշխատավարձ

Վարդան Թորոսյան, աշխատավարձ

7. Իրականացված ծրագրերը՝

–Առաջնորդության հմտությունների զարգացման ինտենսիվ դասընթացներ

–Համայնքային բուժքույրերի ունակությունների բարձրացման եւ վերապատրաստման ծրագիր, փուլ V

–«Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ» դպրոցական բանավեճի ակումբների ստեղծման ծրագիր

- Ստեղծագործական արտահայտման դասընթացներ

-Օժանդակություն Գետաշեն գյուղատնտեսական կոոպերատիվի ֆերմերներին

-Օժանդակություն Զանֆիդա գյուղատնտեսական կոոպերատիվի ֆերմերներին

-Օժանդակություն Լուկաշին գյուղատնտեսական կոոպերատիվի ֆերմերներին

-Երիտասարդական բանկ ծրագիր

-Համայնքային բուժքույրերի ունակությունների բարձրացման եւ վերապատրաստման ծրագիր Ղարաբաղում, փուլ I

-Արդյունավետ հասարակական պաշտպանություն

- Օժանդակություն հաշմանդամներին Ղարաբաղում, փուլ I I I

-Ամառային ճամբար - 2009

- Օժանդակություն Արեւիկ գյուղատնտեսական կոոպերատիվի ֆերմերներին

-Օժանդակություն ,Հերոսական բալլադե խորեոգրաֆիկ ներկայացմանը

-Օժանդակություն ,Հրեշը թատերական ներկայացմանը

-Օժանդակություն ,Բաց երաժշտության փառատոն 2009ե-ին

-Հոգեւոր կրթություն եւ դաստիարակություն երեխաների համար - 2009

-Քաղաքացիական երկխոսություններ եւ գործնական քայլեր 2009-2010,

-Օժանդակություն ֆերմերային տնտեսություններին, փուլ I I I

-Ստեղծագործական արտահայտման դասընթացներ 2009-2010

8. Ֆինանսավորման աղբյուրները՝

– Զինիշյան հիշատակի ծրագիր (ԱՄՆ), ԶՀՀ բոլոր ծրագրերը, ներառյալ գործունեությունը,–272,051,135 դրամ

Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցչություն, ,Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջե դպրոցական բանավեճի ակումբների ստեղծման ծրագիր, 27,150,579 դրամ

Նորվեգիայի արտաքին գործերի նախարարություն, ,Քաղաքացիական երկխոսություններ եւ գործնական քայլեր 2009-2010ե, 23,085,275 դրամ

9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝

271,059,000 դրամ:

10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝

282,151,000 դրամ:

Հաշվետվությունը հաստատված է ,Զինիշյանե հիշատակի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

**Անկախ աուդիտորի եզրակացություն**

ԶՀՀ Գործադիր տնօրեն Էլիզա Մինասյան

ԶՀՀ Գլխավոր հաշվապահ Զարուհի Սահակյան

«Զինիշյան» հիշատակի հիմնադրամի հիմնադիրներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զինիշյան» հիշատակի հիմնադրամի (Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

**Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրենության պատասխանատվություն**

Հիմնադրամի տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վեահսկողության համակարգի սահմանումը, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

**Աուդիտորի պատասխանատվություն**

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վեաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորների դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այդ ռիսկերը գնահատելիս աուդիտն ուսումնասիրում է ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են հիմնադրամի 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների:

2010 թ. մարտի 23

2010թ. մարտի 23

Գագիկ Գյուլբուդաղյան Էմիլ Վասիլյան

Տնօրեն Առաքելության ղեկավար

Հիմնադրամների կողմից հրապարակվող եւ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացվող

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«01/01/2009-31/12/2009»**

**հիմնադրամի 2009 թ. գործունեության մասին**

1.Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

2.Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի 13.10.2000թ. թիվ 1063 հրամանով, պետական գրանցման վկայական թիվ 137 եւ Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից « 17 » սեպտեմբերի 2004թ., պետական գրանցման վկայական 03Ա 065369:

3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, 0033, Գյուլբենկյան 31շ, բն. 20:

4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ գործադիր տնօրեն՝ Ռուզաննա Ծառուկյան

5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Գայանե Ղուկասյան

անդամները՝

Սերոբ Խաչատրյան

Արտաշես Թորոսյան

Գայանե Զարգարյան

Մարինե Պետրոսյան

6. Աշխատակազմը՝

Սուսաննա Սարգսյան

Ալեքսան Մովսեսյան

Արամայիս Փաշինյան

Աշխեն Գյուրջյան

Մարինե Մկրտչյան

Կարեն Սարգսյան

7.Իրականացված ծրագրերը՝

«Քայլ առ քայլ» վաղ մանկության ծրագիր

«Ծնողական կրթություն» ծրագրի գնահատում

«Քննադատական մտածողության զարգացումը կարդալու եւ գրելու միջոցով» ծրագրի ինստիտուցիոնալիզացիա

«Քայլ առ քայլ» ծրագրի իրականացումը Արմավիրի մարզում

3-5 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչների վալիդացիա եւ 0-3 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչների մշակում

Ծնողական կրթություն

ՎՄՁ ռեսուրսների քարտեզագրման ծրագիր

Մենթորների վերապատրաստման ծրագիր

8.Ֆինանսավորման աղբյուրները՝ Դրամաշնորհներ հետեւյալ կազմակերպություններից՝ Բաց հասարակության ինստիտուտ OSF - Բուդապեշտ, Բաց հասարակության ինստիտուտ OSI Նյու-Յորք, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ-UNICEF, «Քայլ առ քայլ» միջազգային ընկերակցություն-ISSA

Ծառայությունների մատուցումից եկամուտներ հետեւյալ կազմակերպություններից՝ՍԻ.Օ.ԷՅ.ԷՖ. Հայաստանի մանուկներ հիմնադրամ, Բրիտանական Խորհուրդ, «Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր ՓԲԸ, «ՍՕՍ-Մանկական գյուղեր» Հայկական բարեգործական հիմնադրամ:

9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 60 635.1 հազար ՀՀ դրամ

10.Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 60 635.1 հազար ՀՀ դրամ

Գործադիր տնօրեն՝ Ռուզաննա Ծառուկյան

Գլխավոր հաշվապահ՝ Արամայիս Փաշինյան

11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

Մեր կարծիքով «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի Հաշվապահական հաշվեկշիռը առ 31 դեկտեմբերի 2009թ., հաշվետու ժամանակաշրջանի Ֆինանսական արդյունքների, Սեփական կապիտալում փոփոխությունների, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները եւ Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված՝ համաձայն Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Հաշվետվությունը հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից 19.03.2010:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ

Աուդիտոր Ա. Քերոբյան

Տնօրեն Մ. Պետրոսյան

Երևան

«12» մարտ 2010թ.

ԱԶԳ **Ծանուցում**

# Արժութային շուկայում ձեւավորված ԱՄՆ դոլարի միջին շուկայական փոխարժեքի հաշվարկման մասին

**Յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 14:30ից մինչեւ 15:00-ն ՀՀ առեւտրային բանկերը եւ վարկային կազմակերպությունները ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվություն՝ արտարժութային շուկայում իրականացրած գործառնությունների վերաբերյալ: Հաշվետվությունում ներառվում են նախորդ աշխատանքային օրվա 14:30ից հետո մինչեւ տվյալ օրվա 14:30-ը ՀՀ բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից իրենց հաճախորդների, այլ առեւտրային բանկերի եւ ՀՀ արժութային բորսայում իրականացված բոլոր արտարժույթի առք եւ վաճառքի գործառնությունները: 15:00ից մինչեւ 15:30-ը ընկած ժամանակահատվածում ներկայացված հաշվետվությունները ամփոփվում են եւ արդյունքում ստացվում է շուկայում ձեւավորված միջին փոխարժեքը: Միջին շուկայական փոխարժեքը ներկայացված հաշվետվություններում ներառված բոլոր գործարքների միջին կշռված փոխարժեքն է, որը եւ Կենտրոնական բանկը հրապարակում է:**

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթի կազմակերպման մասին***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովում (Microsoft BizTalk Server Enterprise Edition 1 Processor License with at least 2 years of Software Assurance՝ թվով 2 հատ) ձեռքբերելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2010թ. ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ 2010թ. ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. մայիսի 04-ին, ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-05 ներքին՝ 18-05, 18-07:

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովվելու նպատակով ավտոմատ հեռախոսային կայան ձեռք բերելու եւ տեղադրելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթի կազմակերպման մասին***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովվելու նպատակով ավտոմատ հեռախոսային կայան ձեռք բերելու եւ տեղադրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2010թ. ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ 2010թ. ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. մայիսի 04 -ին, ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-05 ներքին՝ 18-05, 18-07:

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տեսակոնֆերանսի համակարգի եւ նիստերի, խորհրդակցությունների դահլիճների կոնֆերանս թվային ձայնային համակարգի մատակարարման, մոնտաժման ու կարգաբերման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության բաց մրցույթի կազմակերպման մասին***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տեսակոնֆերանսի համակարգի եւ նիստերի, խորհրդակցությունների դահլիճների թվային ձայնային համակարգի մատակարարման, մոնտաժման ու կարգաբերման աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2010թ. ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ 2010թ. ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. մայիսի 04-ին, ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-05 ներքին՝ 18-05, 18-07:

*ՀՀ ԿԲ հասարակության հետ կապերի ծառայություն*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Բանկերի եւ Ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների Ճյուղային Հանրապետական Միությունը արտահայտում է իր մտահոգությունը առաջին անհրաժեշտության ապրանքների օրեցօր ավելացող գնաճով, որն անառարկելիորեն խիստ կանդրադառնա բնակչության կենսամակարդակի իջեցման վրա, էլ ավելի կվատթարացնի սոցիալապես անապահով խավի վիճակը, կավելացնի սակավ ապահոված ընտանիքների թիվը:

Առաջիկայում գազի գնի բարձրացումը ուղղակիորեն կազդի լայն սպառման ապրանքների, ծառայությունների գնաճի վրա, որի արդյունքում կխորանա սոցիալական ճգնաժամը, կվատանան բնակչության կյանքի պայմանները:

Ճյուղային Արհմիությունը հույս է հայտնում, որ բնակչությանը խիստ ծանր սոցիալական կացության մեջ չդնելու նպատակով պետական մարմինները ճիշտ գնահատելով հարցի կարեւորությունը եւ համաժողովրդականությունը կձեռնարկեն վճռորոշ եւ կանխարգելիչ միջոցառումներ:

*Հայաստանի Բանկերի եւ Ֆինանսավարկային արհեստակցական կազմակերպությունների Ճյուղային Հանրապետական Միության Գործադիր Կոմիտե*

**www. azg.am**

**ACBA-CREDIT AGRICOLE BANK**

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի ապրիլի 27-ին ժամը 12:00-ին «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Դավթաշեն» մասնաճյուղում (հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն I թաղամաս 42/2) տեղի է ունենալու Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

**United Nations Development Programme**

## VA 17-10-HR
## Vacancy Announcement

UNDP Armenia

The United Nations Development Programme in Armenia invites applications from qualified and experienced candidates for the following positions:

**1. Local Expert on trade;**

**2. Team Leader and Local Expert on trade.**

Please visit **http://operations.undp.am/recruitment/** to obtain full Job Description, application procedures and requirements.

Applications can be submitted on-line through **http://operations.undp.am/recruitment/** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str.

A complete application form should consist of a letter of interest, copies of diplomas, an updated CV and the UN Personal History Form (P11), available at the UN House Security Desk. Please clearly indicate in your application the title of the position and the VA number.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. Applications received after the closing date will not be considered. Only short-listed candidates will be contacted.

**Date advertised:** **24 March 2010**

**Closing date:** **04 April 2010, 18:00**

*Հավելված 1*
*ՀՀ արդարադատության նախարարի*
*2009 թ-ի դեկտեմբերի 22-ի N 319-Ն հրամանի*

**Հիմնադրամների կողմից հրապարակվող եւ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացվող հաշվետվություն**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«01/01/2009-31/12/2009»**

**հիմնադրամի 2009 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամ

2. Պետական գրանցման վկայական՝ 28616004354 եւ (կամ) Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «08» հոկտեմբերի 2001 թ., պետական գրանցման վկայական 03Ա 051794:

3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Տերյան 74:

3.1. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ գործադիր տնօրեն՝ Արմեն Սիմոնյան

3.2 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Տիգրան Սարգսյան

4. Իրականացված ծրագրերը՝ Համահայկական երիտասարդական յոթերորդ համաժողով, «Եվրոպական երիտասարդական քաղաքականություն, կառույցներ եւ ծրագրեր» դասընթացներ, «Միջմշակութային ուսուցում եւ միջազգային երիտասարդական աշխատանք» ուսուցողական դասընթաց, Հայաստան-Սփյուռք երիտասարդական համագործակցությանը վերաբերող սեմինար-քննարկումներ

5. Ֆինանսավորման աղբյուրները՝ Սուբսիդիա, ձեռնարկատիրական գործունեություն:

6. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 68282,0 ՀՀ դրամ

7. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 50225,0 հազար ՀՀ դրամ




Գործադիր տնօրեն՝ Ա.Սիմոնյան

Կ.Տ. Գլխ. հաշվապահ Ն.Խաչատրյան

11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

«Էյվիսի ֆոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երեւան
Նուբարաշեն, 10 փող, տուն 6 հեռ. 54 28 63
ՏԳՀ, Երեւան, Մյասնիկյանի պողոտա 5/1 ֆաքս 54 55 07
Աուդիտորական գործունեության լիցենզիա թիվ ԱԾ N 048 առ 02.08.2006 թ. տրված
ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից

### ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Համահայկական երիտասարդական
միջազգային կենտրոն» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Համահայկական Երիտասարդական միջազգային կենտրոն» Հիմնադրամի (այսուհետեւ «Հիմնադրամ») կից Հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31 դեկտեմբերի 2009 թ., հաշվետու ժամանակաշրջանի Ֆինանսական արդյունքների, Սեփական կապիտալում փոփոխությունների, Դրամական հոսքերի միջոցների մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, Հիմնադրամի ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները Հիմնադրամի ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբեր 2009 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի գործունեության ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Աուդիտ իրականացնող անձ
«Էյվիսի ֆոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ




Աուդիտոր Ա. Մխիթարյան

Տնօրեն Մ. Պետրոսյան

Երևան «19» մարտ 2010թ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.03.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: